

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի ապրիլի -ի N հրամանի

«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր
(1-12-րդ դասարաններ)

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ 1-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

Հիմնական (կրտսեր) ծրագրի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցման նպատակն է՝

- առողջ, համակողմանի զարգացած, աշխատանքային գործունեությանը պատրաստ, սեփական ուժերին վստահ, առողջ և անվտանգ կենսակերպ դրսևորող, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող ու նախաձեռնող քաղաքացի ձևավորելը:

Հիմնական (միջին) ծրագրի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցման նպատակն է՝

- նպաստել սովորողների առողջության ամրապնդմանը և բարելավմանը, կեցվածքի ձևավորմանը, օրգանիզմի կոփմանն ու առողջ ապրելակերպը կենցաղում արմատավորելուն:

Միջնակարգ (ավագ) ծրագրի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցման նպատակն է՝

- նպաստել սովորողների շարժողական ունակությունների (արագաշարժություն, ուժ, դիմացկունություն, ճկունություն, ճարակություն, կոորդինացիա, ցատկունակություն և այլն) զարգացմանը, որոնք լայն կիրառում են գտնում մարդու ամենօրյա գործնական կյանքում:
- նպաստել անձի մտավոր և ֆիզիկական աշխատունակության բարձրացմանը, ձեռք բերելով կարողություններ և հմտություններ, որոնք կնպաստեն հետագա աշխատանքային գործունեությանը նախապատրաստված, սոցիալապես ակտիվ, արտակարգ իրավիճակներում կողմնորոշվող և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի ձևավորելուն:
- տրամադրել գիտելիքներ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նշանակության, առողջ ապրելակերպի կանոնների, օլիմպիական խաղերի, առաջին օգնություն ցուցաբերելու կանոնների մասին, ինչպես նաև համագործակցելու, կազմակերպելու և նախաձեռնելու հատկություններ:
- նպաստելու սովորողների մասնագիտական կողմնորոշմանը:

2. ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ֆիզիկական կուլտուրա առարկայի ծրագիրը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված նորմատիվ փաստաթուղթ է, որը ներառում է ուսումնական առարկայի

- հայեցակարգը,
- թեման,
- նպատակը,
- վերջնարդյունքները,
- բովանդակությունը,
- գործնական աշխատանքը,
- ընդանուր գաղափարները,
- միջառարկայական կապերը,
- կապը հանրակրթության չափորշիչների հետ,
- առաջարկվող օգտակար գրականության ցանկը,
- հանրակրթական դպրոցների մարզադահլիճների և ուսումնամարզական կահավորանքի օրինակելի անվանացանկը:

Ֆիզիկական դաստիարակության ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների, ուղեցույցների ստեղծման ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով. ֆիզիկական կուլտուրա առարկայի ծրագրով առաջարկվող նյութը պետք է համապատասխանի սովորողների անհատական առանձնահատկություններին, լինի հետաքրքիր ու իրատեսական:

Առկա և հեռավար եղանակով կազմակերպվող դասերի ընթացքում վարժությունների ընտրությունը պետք է կատարել այնպես, որ դրանք նպաստեն սովորողների արագաշարժային, ուժային, արագաուժային, շարժումների ճշգրտության, կոորդինացիայի, հավասարակշռության, դիմացկունության, ցատկունակության, ճարպկության և ճկունության ունակությունների մշակմանն ու կատարելագործմանը:

Անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրմանը՝ ֆիզիկական դաստիարակության ուսուցանվող նյութն ավելի մատչելի, գրավիչ դարձնելու և յուրացման գործընթացն արագացնելու նպատակով:

Թիմի լիարժեք անդամ զգալու նպատակով այն երեխաները, որոնք տարբեր պատճառներով չեն մասնակցի շարժողական ակտիվություն պահանջող գործողություններին, կարող են ներառվել նաև օժանդակող աշխատանքներում որպես մարզական լրագրող, մարզական մեկնաբան, մարզական լուսանկարիչ, մրցավար, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ-մարզչի օգնական և այլն:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և տարբեր բժշկական խմբերում ընդգրկված երեխաները ևս պետք է սեփական ֆիզիկական հնարավորությունները ճանաչելու և դրանց համապատասխան իրենց շարժողական ունակությունները զարգացնելու հնարավորություն ունենան:

Ընդհանուր առմամբ պետք է առաջնորդվել մանկավարժության՝ ուսուցման և դաստիարակության սկզբունքներով:

Հատկապես 8-րդ դասարանից սկսած՝ կարևոր է, որ ուսուցիչը ֆիզիկական դաստիարակության գործընթացում մշտապես հաշվի առնի դպրոցականների մարզական նախընտրությունները՝ չսահմանափակվելով սույն ծրագրում նշված մարզաձևերով: Այդ դեպքում ուսուցիչը հնարավորություն ունի մարզման ձևն ու ժամաբաշխումն իրականացնելու ըստ անհրաժեշտության՝ ապահովելով վերջնարդյունքները:

Ընտրովի ուսումնական նյութին վերաբերող վերջնարդյունքների ապահովումը պարտադիր է միայն համապատասխան մարզաձևի մարզումների հնարավորության դեպքում:

Ֆիզիկական դաստիարակության գործընթացում սովորողների հետաքրքրությունները հաշվի առնելու մեթոդոլոգիական հիմքերը հետևյալն են. մարզական ուղղվածության (սպորտայնացված) ֆիզիկական դաստիարակության կազմակերպման ձևերը, որոնք ապահովում են յուրաքանչյուր դպրոցականի համար մարզական կուլտուրայի յուրացումը նրա հնարավորություններին, կարողություններին և անձնային կողմնորոշմանը համապատասխան, սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության շրջանակում պարտադիր է մարզական տեխնոլոգիաների և առողջարարական մարզումների կազմակերպումը, դպրոցական ֆիզիկական կուլտուրայի դասերի սպորտայնացման գործընթացում տեղի է ունենում սովորողների խմբավորումն ուսումնամարզական խմբերում՝ միևնույն հետաքրքրություններով, պահանջումներով, հավակնություններով, ֆիզիկական պատրաստականությամբ, տիպաբանական առանձնահատկություններով և կենսաբանական հասունության աստիճանով, դպրոցահասակ երեխաներին այդ ուսումնամարզական պարապմունքներում ընդգրկվելու համար արդյունավետ նախադրյալներ է ստեղծում, ինչը մեծ հնարավորություն է ընձեռում


մարզական կողմնորոշման ու ընտրության համար, նպատակաուղղված է մարզական պարապմունքների դրդապատճառների և հետաքրքրության ձևավորմանը:

Ֆիզիկական կուլտուրայի ուսուցման դասարանային ձևով կազմակերպված դասերից գատ, սույն ծրագրի վերջնարդյունքների առավել ամբողջական ապահովումը կիրականացվի սովորողների մարզական նախընտրությամբ պարտադիր արտաուսումնական մարզումների հաճախելով:

Սպորտայնացված դասեր կազմակերպելիս կարելի է առաջնորդվել մանկապատանեկան մարզադպրոցի համապատասխան մարզաձևերի համար նախատեսված ծրագրերով, իսկ այդ ընթացքում դպրոցականների բեռնվածությունն անհրաժեշտ է պլանավորել այդ նույն ծրագրի հիման վրա, սակայն մեկ աստիճան ցածր: Ի տարբերություն մարզադպրոցների դպրոցականների մարզական ուղղվածության՝ ֆիզիկական դաստիարակության գործընթացը պետք է կրի առողջարարական բնույթ: Սպորտայնացված ֆիզիկական դաստիարակության գործընթացը հնարավոր է կազմակերպել նաև այլընտրանքային, հեղինակային, լիազոր մարմնի կողմից երաշխավորված, հաստատված ծրագրերի շնորհիվ:

Ինչպես երևում է ստորև ներկայացված գծապատկերից, տվյալ մոտեցումն ունի ներգործության բազմաթիվ դրական կողմեր և թույլ է տալիս մանկավարժական գործընթացում յուրաքանչյուր սովորողին տարբեր մարզաձևերի ու ֆիզկուլտուրային-առողջարարական խմբային պարապմունքների միջոցով հնարավորինս բացահայտել սեփական ունակությունները, ձևավորել հասարակական կյանքում անհրաժեշտ բազմաթիվ հատկություններ, բավարարել ֆիզկուլտուրայի և մարզական հետաքրքրություններն ու պահանջները, ինչպես նաև՝ իրենց առողջական վիճակը:

Դպրոցականների սպորտայնացված (ընտրած մարզման ձևի վրա հիմնված) ֆիզիկական դաստիարակության ներգործության հիմնական ուղղությունները



Ուսումնական գործունեության տեսակները.

- ✓ Ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ տեսական գիտելիքների հաղորդում զրույցի և պատմելու միջոցով, ուսումնական նյութի բացատրություն, ցուցումներ, հրահանգներ:
- ✓ Վարժությունների ցուցադրում, պաստառների, ֆիլմերի ցուցադրում, գործնական պարապմունքներ խմբային, ճակատային, անհատական, հոսքային, հերթափոխային և շրջանաձև մեթոդներով:
- ✓ Ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում:
- ✓ Մարզումային պարտադիր խմբակներ, որոնց ընտրությունը կատարում է սովորողը, սակայն դրանց կարող են չհաճախել մարզական խմբակներ հաճախող երեխաները:
- ✓ Հեռավար մարզումներ՝ առավելապես ֆիթնես տեխնոլոգիաներ օգտագործելով:

Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ կրթական աստիճանների. նրանց գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ծավալի և արժեքային համակարգի նկարագրությունները՝ ըստ կրթական աստիճանների (տարրական, հիմնական և ավագ), ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երեք մակարդակով, որոնք համապատասխանում են նվազագույն, միջին և բարձր պատրաստվածությանը:

3. ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տարրական ծրագիր. գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

Նվազագույն	Միջին	Բարձր
<p>Պատկերացում ունի օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի կանոնների վերաբերյալ: Գիտի ֆիզիկական վարժությունների դերն ու նշանակությունը առողջության ամրապնդման գործում: Գիտակցում է կոփման կանոնների և անձնական հիգիենայի պահպանման կարևորությունը: Գիտի սովորած ֆիզիկական վարժությունների, որոշ շարժախաղերի անվանումները: Պատկերացում ունի օլիմպիական խաղերի և անվանի մարզիկների</p>	<p>Ինքնուրույն կատարում է առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն: Կատարում է ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ: Կարող է մագլցել մարզանստարանի և մարզապատի վրայով: Կարող է քայլել մարզանստարանի վրայով, ոտնաթաթի վրա, կատարել կից քայլեր, դարձումներ, կքանիստներ: Կատարում է առաջգլուխկոնձի, թիկնականգ և կարող է ընդունել «կամուրջ» դրությունը: Կատարում է կախեր և հենումներ</p>	<p>Պահպանում է օրվա ռեժիմը և անձնական հիգիենայի կանոնները: Ինքնուրույն կազմում և կատարում է ֆիզիկական վարժությունների համալիրներ: Հստակորեն կատարում է մարմնամարզական շարային, ակրոբատիկական, ընդհանուր զարգացնող վարժությունները, կախերը և հենումները: Արագացումով վազում է 30 մ՝ ցուցաբերելով բարձր արդյունքներ: Հեռացատկում և բարձրացատկում է թափավազքով, թենիսի գնդակը նետում է</p>

<p>վերաբերյալ: Կատարում է շարային հրահանգները, շարափոխումները միատողանից երկտողանի, միասյուն շարքից երկսյուն շարքի: Մագլցել, քայլել մարզանստարանի վրայով, գլորվել, մարզապատից կախ դրությունում ոտքերը ծալել և ուղղել, երաժշտության ոլորտին համապատասխան քայլել, վազել, ցատկել: Պատկերացում ունի «Աթլետիկա» մարզաձևի մասին: Կարող է ճիշտ քայլել, վազել 20 մ, հավասարաչափ դանդաղ վազել 3 րոպե, տեղից հեռացատկել, բարձրացատկել, ցատկել ցատկապարանով, թենիսի գնդակը նետել նշանակետին, մեծ գնդակը նետել և բռնել: Պատկերացում ունի շարժախաղերի մասին, կարողանում է ինքնուրույն խաղալ որոշ շարժախաղեր՝ պահպանելով կանոնները: Ցուցաբերում է բարություն, ազնվություն, ընկերասիրություն: Գիտի դահուկային</p>	<p>մարզապատի և մարզանստարանի վրա: Կարող է քայլել և վազել երաժշտության ոլորտին համապատասխան, կատարել կողադիր, փոփոխական, քառատրոփ քայլեր, ոստյուններ: Կարող է վազել 30 մ, դանդաղ վազել 6 րոպե: Թափավազքով հեռացատկել և բարձրացատկել: Թենիսի գնդակը նետել նշանակետին: Խաղում է շարժախաղեր, այդ թվում՝ ազգային խաղերի տարրերով, ճիշտ կանոններով, համաձայնեցնելով շարժումները, և կողմնորոշվում է տարածության մեջ: Ունակ է կողմնորոշվել տարբեր իրավիճակներում: Ցուցաբերում է նախաձեռնություն, համարձակություն, փոխօգնություն, արագաշարժություն: Կատարում է փոփոխական երկքայլ ընթացք: Արգելակում է «գութանաձև» և</p>	<p>նշանակետին և երկար հեռավորությամբ՝ ցուցաբերելով բարձր արդյունքներ: Տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվում է, որոշումներ է կայացնում, ցուցաբերում է համարձակություն, նախաձեռնություն, փոխօգնություն և համագործակցության կարողություններ: Ունի բավարար ֆիզիկական պատրաստվածություն: Սահուն կատարում է փոփոխական երկքայլ ընթացք: Սահուն կատարում է արգելակում «գութանաձև» և «հենումով»: Սահուն կատարում է վելելք «սանդղաձև» և «եղևնաձև» եղանակներով: Կրկնվող դահուկաընթացքի ժամանակ ցուցադրում է բարձր արագություն: Կրող կրծքի վրա և կրող մեջքի</p>
--	--	--

<p>պատրաստության հիգիենիկ պահանջները: Խնամքով է վերաբերվում դահուկներին, մարզակոշիկներին, գույքին: Տեղաշարժվում է սահաքայլքով, «եղևնաձև» և «կիսաեղևնաձև» եղանակով բարձրանում է բլրակ: Հաղթահարում է կարճ և միջին տարածություններ: Գաղափար ունի լողավազանում և ջրային միջավայրում վարքի կանոնների մասին: Կատարում է շնչառական վարժություններ: Ջուգակցում է կրոլ կրծքի վրա լողաճի ձեռքերի, ոտքերի աշխատանքը շնչառության հետ: Կարողանում է լողալ 25 մ:</p>	<p>«հենումով»: Կատարում է վերելք «սանդղաձև» և «եղևնաձև»: Կրկնվող դահուկաընթացքով հաղթահարում է 60-70 մ: Հաղթահարում է 1 կմ տարածություն: Սահուն զուգակցում է կրոլ կրծքի վրա լողաճի ձեռքերի, ոտքերի աշխատանքը շնչառության հետ: Սահուն զուգակցում է կրոլ մեջքի վրա լողաճի ձեռքերի, ոտքերի աշխատանքը շնչառության հետ: Կատարում է բրաս լողաճի ձեռքերի և ոտքերի աշխատանքը: Բրաս լողաճով կատարում է դարձումներ: Բրաս և կրոլ լողաճերով հաղթահարում է 50մ տարածություն:</p>	<p>վրա լողաճերով լողատարածությունները անցնում է արագ տեմպով: Բրաս լողաճով ձեռքերի և ոտքերի աշխատանքը զուգակցում է շնչառության հետ: Կրոլ և բրաս լողաճերով հաղթահարում է 50 և ավելի մետր տարածություն:</p>
--	---	--

Տարրական դպրոց. վերաբերմունքը և արժեքները
Սեփական անձի գնահատում, առողջության առժևորում և վստահություն իր ուժերի նկատմամբ:
Սեփական մարմնի խնամքին և առողջությանը հետևելու կարևորության արժևորում:
Ֆիզիկական վարժություններով զբաղվելու նշանակության կարևորում:

Հիմնական ծրագիր. գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

Նվազագույն	Միջին	Բարձր
<p>Կարևորում է ֆիզիկական կուլտուրայի նշանակությունը անձի ներդաշնակ զարգացման գործում:</p> <p>Պատկերացում ունի ֆիզիկական կուլտուրայի պարապմունքների ժամանակ անվտանգության կանոնների մասին:</p> <p>Պատկերացում ունի առողջ ապրելակերպի, օլիմպիական խաղերի նշանակության և «Արդարացի խաղի» մասին:</p> <p>Կատարում է շարային հրահանգներ, շարափոխումը միասյուն շարքից քառասյուն շարքի, դարձումներ զույգերով, եռյակներով, ընթացքից:</p> <p>Կատարում է ընդհանուր զարգացնող վարժությունների մեկ համալիր, կարողանում է ցատկել այծի վրայով (60-100 սմ), մագլցել պարանը, կատարել առաջգլուխկոնձի և</p>	<p>Կարող է կատարել ընդհանուր զարգացնող համալիր վարժություններ:</p> <p>Կարող է կատարել կախեր և հենումներ.</p> <p>տղաներ՝ պտտաձողի վրա վերելք ուժով, կախ ծավված, կախ արտակորված, կախ դրությունից ձգումներ, աղջիկներ՝ կախ պառկած դրությունից ձգումներ:</p> <p>Կարող է հենացատկել՝ այծի վրայով «ոտքերը կծկած» եղանակով, տղաները՝ 100- 110 սմ բարձրություն, աղջիկները՝ ցատկել այծի վրայով «ոտքերը զատած» եղանակով՝ 100 սմ բարձրություն:</p> <p>Կարող է կատարել՝ Տղաներ՝ առաջգլուխկոնձի, երկարությամբ, կանգ ձեռքերի վրա վարժակցի օգնությամբ: Աղջիկներ՝ հետգլուխկոնձի ընդունելով կիսալարան դրությունը:</p> <p>Կարող է պարանամագլցել ձեռքերի և ոտքերի օգնությամբ՝ տղաները 3 մ,</p>	<p>Ինքնուրույն որոշում է իր ֆիզիկական զարգացման մակարդակը:</p> <p>Հստակ կատարում է ծրագրով նախատեսված մարմնամարզական բոլոր վարժությունները:</p> <p>Ինքնուրույն կազմում և կատարում է ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ:</p> <p>Կարող է ճիշտ հեռացատկել, բարձրացատկել, վազել արագացումով 60 մ, փոփոխական տեմպով 10 րոպե՝ ցուցաբերելով բարձր արդյունքներ:</p> <p>Մարզախաղերի ժամանակ հստակ կատարում է տեխնիկական և տակտիկական գործողություններ:</p> <p>Կարող է յուրացրած մարզախաղերի ժամանակ դրսևորել նախաձեռնություն,</p>

<p>հետզլուխկոնծի: Կատարում է կախեր և հենումներ. տղաները՝ պտտածողի վրա, կախ դրությունից ձգումներ, աղջիկները՝ կախ պառկած դրությունից՝ ձգումներ:</p> <p>Կարող է վազել արագացումով 30 մ, հավասարաչափ դանդաղ վազել 6 րոպե, թափավազքով հեռացատկել, բարձրացատկել (60-80 սմ բարձր), թենիսի գնդակը նետել նշանակետին և երկար հեռավորությամբ:</p> <p>Պատկերացում ունի մարզախաղերի տարբեր մարզածների մասին:</p> <p>Կարող է բասկետբոլիստի կեցվածքով տեղաշարժվել, գնդակը փոխանցել և ընդունել, վարել աջ և ձախ ձեռքով ուղղության և արագության փոփոխումով, նետել զամբյուղի մեջ տեղից և շարժման ընթացքում, խաղալ բասկետբոլ պարզեցված կանոններով:</p> <p>Կարող է վոլեյբոլիստի</p>	<p>աղջիկները 2,5 մ բարձրություն: Կարող է վազել արագացումով 40 մ, փոփոխական տեմպով 6 րոպե /աղջիկներ/ և 8 րոպե /տղաներ/:</p> <p>Վազել 1000 մետր: Կարող է բարձրացատկել «Քայլանցման» եղանակով՝ տղաները 100-110 սմ, աղջիկներ 80-90 սմ բարձրության:</p> <p>Կարող է էստաֆետային փայտիկը ճիշտ փոխանցել և ընդունել:</p> <p>Կարող է բասկետբոլի գնդակը նետել զամբյուղի մեջ երկու քայլով, միջին և հեռու տարածությունից, կատարել տուգանային նետում:</p> <p>Խաղալ բասկետբոլ կանոնների պահպանումով:</p> <p>Կարող է վոլեյբոլի գնդակը փոխանցել ցանցի վրայով և ընդունել երկու ձեռքով, կատարել ցածից և վերին ուղիղ սկզբնահարված, ուղիղ հարձակողական հարված, ընդունել սկզբնահարվածը:</p> <p>Խաղալ վոլեյբոլ կանոնների պահպանումով:</p> <p>Կարող է հանդբոլի գնդակով կատարել վարում, փոխանցումներ,</p>	<p>կազմակերպվածություն, ինքնտիրապետում, հանդուրժողականություն:</p> <p>Տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվում է, որոշումներ կայացնում:</p> <p>Գաղափար ունի լողի ինքնուրույն մարզումների մասին:</p> <p>Սահուն և արագ լողում է կրոլ և բրաս լողաճերով 200 մետր:</p> <p>Կարող է խեղդվողին տեղափոխել և նրա բռնումից ազատվել:</p> <p>Կարող է ուժային վարժությունների բազմակի կրկնությունները կատարել սահուն, անկաշկանդ:</p> <p>Ստուգողական պահանջները հանձնելիս դրսևորում է բարձր ուժային պատրաստություն:</p> <p>Գիտի դահուկային պարապմունքների առողջարարական նշանակությունը:</p> <p>Կարող է սահուն կատարել</p>
---	---	--

<p>կեցվածքով տեղաշարժվել, կատարել գնդակով փոխանցումներ երկու ձեռքով տեղում և շարժման մեջ, ցանցի վրայով, սկզբնահարված, ուղիղ հարձակողական հարված, խաղալ վոլեյբոլ պարզեցված կանոններով:</p> <p>Կարող է կատարել հանդբոլի գնդակի վարում, փոխանցում, նետում դարպասին, տուգանային նետում, խաղալ հանդբոլ պարզեցված կանոններով:</p> <p>Կարող է ֆուտբոլիստի կեցվածքով տեղաշարժվել, հարվածել անշարժ և գլորվող գնդակին ոտնաթաթի ներսի և ոտնաթաթի միջին մասով:</p> <p>Գլորվող գնդակը կասեցնել ոտնաթաթի ներսի և դրսի մասերով:</p> <p>Գնդակը վարել ոտնաթաթի ներսի մասերով: Խաղալ ֆուտբոլ պարզեցված կանոններով: Ցուցաբերում է բարություն, փոխօգնություն, ընկերասիրություն:</p> <p>Կատարում է կրոլ կրծքի և</p>	<p>նետում դարպասին վերևից շարժման մեջ, կանգառով, ցատկով, գնդակը դուրս խփել, որսալ և շրջափակել: Խաղալ հանդբոլ կանոնների պահպանումով:</p> <p>Կարող է հարվածել ֆուտբոլի գլորվող գնդակին ոտնաթաթի ներսի մասով և ոտնաթաթով, գնդակը վարել, կասեցնել ոտնաթաթով, կրծքով, խլել մրցակցից: Խաղալ ֆուտբոլ կանոնների պահպանումով:</p> <p>Ցուցաբերում է համարձակություն, նախաձեռնություն, փոխօգնություն, ինքնատիրապետում, հանդուրժողականություն:</p> <p>Կրոլ և բրաս լողաձևով լողում է հավասարաչափ և փոփոխական արագությամբ 100 մետր:</p> <p>Կարող է խեղդվողին տեղափոխել:</p> <p>Կարևորում է ուժային վարժությունների նշանակությունը ներդաշնակ զարգացման համար:</p> <p>Կարող է ծանրաձողով կատարել կքանիստներ, սեղմումներ:</p> <p>Կարող է մարզասարքերի վրա կատարել վարժություններ ուժի մշակման ուղղությամբ:</p>	<p>վերելքների, վայրէջքների, դարձումների և արգելակումների տեխնիկական տարրերը:</p> <p>Գիտի սեղանի թենիսի կրթական, առողջարարական և դաստիարակչական նշանակությունը:</p> <p>Կարող է կատարել սեղանի թենիսի տեխնիկական հնարքները:</p>
--	---	---

<p>մեջքի վրա լողաճի դարձումները, կրոլ կրծքի և մեջքի վրա շարժումները զուգակցում է շնչառության հետ:</p> <p>Կատարում է բրաս լողաճի մեկնարկները և դարձումները, լողում է 50 մետր:</p> <p>Պատկերացում ունի ծանրամարտի և ուժային եռամարտի վերաբերյալ:</p> <p>Կարող է զույգերով կատարել ուժային վարժություններ:</p> <p>Կարող է համալիր վարժություններ կատարել մարզագույքի օգտագործմամբ:</p> <p>Կարող է ծանրաձողով կատարել վարժություններ ձեռքերի և ոտքերի մկանախմբերի համար:</p> <p>Գիտի դահուկային պարապմունքների առողջարարական նշանակության մասին:</p> <p>Կարող է սահուն կատարել վերելքների, վայրէջքների,</p>	<p>Կարող է վնասվածքների և ցրտահարությունների դեպքում ցույց տալ առաջին օգնություն:</p> <p>Կարող է կատարել չմշկային ընթացք և հենումով դարձում:</p> <p>Կարող է կրկնվող դահուկաընթացքով անցնել 500 մ:</p> <p>Գիտի սեղանի թենիսի կրթական, առողջարարական և դաստիարակչական նշանակությունը:</p> <p>Կարող է կատարել սեղանի թենիսի տեխնիկական հնարքները:</p>	
---	--	--

<p>դարձումների և արգելակումների տեխնիկական տարրերը: Գիտի սեղանի թենիսի ստեղծման և զարգացման պատմությունը: Կարող է կատարել սեղանի թենիսի տեխնիկայի հնարքները:</p>		
--	--	--

Միջին դպրոց. վերաբերմունքը և արժեքները
Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու անհրաժեշտության, առողջության պահպանման և ներդաշնակ զարգացման կարևորում:
Հետևողականություն սեփական առողջական վիճակի, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության խնդիրներում:
Օլիմպիզմի և օլիմպիական շարժման հումանիստական համամարդկային գաղափարների կարևորում:
Բարոյականային հատկանիշներ՝ փոխօգնության պատրաստակամություն և հայրենասիրություն, հանդուրժողականություն, հարգանք ուրիշի նկատմամբ և օգնության հասնելու պատրաստակամություն:

Միջնակարգ ծրագիր. գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

Նվազագույն	Միջին	Բարձր
------------	-------	-------

<p>Գիտենալ ժամանակակից օլիմպիական շարժման ուղղությունները և համամարդկային արժեքները:</p> <p>Դրսևորել մարդասիրական վարքագիծ և հարդորժողականություն:</p> <p>Կարողանալ վնասվածքների դեպքում և արտակարգ իրավիճակներում ցույց տալ առաջին օգնություն:</p> <p>Գիտենալ գերհոգնածության դրսևորման ձևերը և կանխարգելման միջոցները:</p> <p>Գիտենալ ընտանեկան ֆիզիկական դաստիարակության կարևորությունը, մեթոդները և միջոցները:</p> <p>Կարողանալ ցուցաբերել վազքային, ցատկային և նետումների վարժությունների տեխնիկայի կատարման հապատասխան հմտություններ:</p> <p>Կարողանալ ցածր մեկնարկից վազել 50 մ, արագացումով 60-100 մ, հավասարաչափ տեմպով վազել 8-10 րոպե, փոխանցումավազքի փայտիկը ճիշտ փոխանցել և ընդունել, գիտենալ արգելավազքի կանոնները և կարողանալ հաղթահարել 2-3 արգելք, հեռացատկել «կծկված» եղանակով, բարձրացատկել «քայլանցում» եղանակով, կարողանալ նետել թենիսի գնդակը և նոնակը:</p> <p>Ցուցաբերել կարգապահություն, տոկունություն, նպատակասլացություն,</p>	<p>Պատկերացումներ ունենալ տարբեր ծանրաբեռնվածություններին օրգանիզմի հակազդեցության մասին:</p> <p>Գիտենալ բեռնվածության բաղադրիչները և ինքնահսկման ձևերը:</p> <p>Տեղեկություններ տալ առողջ ապրելակերպի էության և բաղադրատարրերի կիրառման անհրաժեշտության մասին:</p> <p>Կարողանալ վազել արագացումով 100 մ, հավասարաչափ և փոփոխական տեմպով վազել 8-10 րոպե, փոխանցումավազել 4*50 մ, արգելավազք 60 մ, հեռացատկել «կծկված» և «արտակորված» եղանակներով, բարձրացատկել տարբեր եղանակներով, նետել նոնակը թափավազքով:</p> <p>Կարողանալ կատարել տարբեր շարափոխումներ, ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ՝ կցագնդերով, կշռաքարերով (տղաներ), օղակներով, ցատկապարանով (աղջիկներ):</p> <p>Կարող է կատարել կախեր և</p>	<p>Գիտենալ և կարողանալ բնութագրել պարապմունքների ժամանակ սիրտ-անոթային, շնչառական, կենտրոնական նյարդային համակարգում, հենաշարժողական ապարատում առաջացող դրական փոփոխությունները:</p> <p>Գիտենալ զինվորական ծառայության նախապատրաստման գործընթացում ֆիզիկական բարձր պատրաստվածության և կիրառական վարժությունների տիրապետման անհրաժեշտությունը և նշանակությունը:</p> <p>Գիտենալ բժշկական վերահսկողության ձևերը, միջոցները:</p> <p>Գիտենալ ֆիզիկական զարգացման հատկանիշները և մակարդակի որոշման մեթոդները:</p> <p>Կարողանալ հստակ և տեխնիկապես ճիշտ կատարել ծրագրով նախատեսված մարմնամարզական բոլոր վարժությունները:</p> <p>Ինքնուրույն կազմում և կատարում է ընդհանուր զարգացնող վարժությունների համալիրներ:</p> <p>Ձեռք է բերել շարժումները տարբերակելու, փոխկապակցելու, սահուն կատարելու, կոորդինացիայի հմտություններ</p> <p>Կարող է տարբեր եղանակներով տեխնիկապես ճիշտ հեռացատկել,</p>
--	---	--

<p>համարձակություն, կարողանալ հաղթահարել դժվարությունները:</p> <p>Կարողանալ ինքնուրույն կատարել ընդհանուր զարգացնող, ռիթմիկ մարմնամարզության, ուժային, ճկունության, ճարպկության, ցատկունակության վարժությունները:</p> <p>Կարողանալ կատարել կախեր և հենումներ. տղաները՝ պտտածողի վրա վերելք ուժով, կախ ծալված, կախ արտակորված, կախ դրությունից ձգումներ, աղջիկները՝ կախ պառկած դրությունից ձգումներ:</p> <p>Կարողանալ հենացատկել նժույգի վրայով, տղաները՝ 110- 120 սմ բարձրությունը: Աղջիկները՝ ցատկ այծի վրայով «ոտքերը զատած» եղանակով 110 սմ բարձրություն: Կարողանալ կատարել. տղաները՝ գլորումներ առաջ, երկարությամբ, կանգ ձեռքերի վրա, աղջիկները՝ գլորումներ ետ ընդունելով կիսալարան դրությունը, թիկնականգ:</p> <p>Կարողանալ պարանամագլցել ձեռքերի և ոտքերի օգնությամբ, տղաները 3-5 մ, աղջիկները՝ 2,5-3 մ բարձրություն:</p> <p>Գիտենալ բասկետբոլ խաղի կանոնները:</p> <p>Կարողանալ տեխնիկապես ճիշտ կատարել գնդակի վարում, ընդունում և փոխանցում՝ պաշտպանի ակտիվ դիմադրությամբ, գնդակի նետումներ երկու</p>	<p>հենումներ. տղաները՝ պտտածողի վրա վերելք ուժով և շրջահենումով, ձգումներ պտտածողին, աղջիկները՝ կախ պառկած դրությունից ձգումներ:</p> <p>Կարող է հենացատկել նժույգի վրայով, տղաները՝ 110-120 սմ բարձրություն, աղջիկները՝ ցատկ այծի վրայով «ոտքերը զատած» եղանակով 100 սմ բարձրություն: Կարող է կատարել. տղաները՝ առաջգլուխկոնձի, ետ երկարությամբ, կանգ ձեռքերի վրա, աղջիկները՝ հետգլուխկոնձի ընդունելով կիսալարան դրությունը:</p> <p>Կարող է պարանամագլցել ձեռքերի և ոտքերի օգնությամբ, տղաները 5 մ, աղջիկները՝ 3 մ բարձրություն:</p> <p>Կարողանալ գնդակը սահուն վարել արագության և ուղղության փոփոխմամբ, դարձումներով և խաբուսիկ շարժումներով, գնդակի նետումներ երկու ձեռքով, ուսի վրայից, աջ և ձախ կողմերից միջին հեռավորությունից, կենտրոնից և տուգանային նետումներ, գնդակի ընդունում և փոխանցում տարբեր դիրքերից և իրադրություններից, պաշտպանողական և</p>	<p>բարձրացատկել, վազել արագացումով 100մ, փոփոխական և հավասարաչափ տեմպով 10-15րոպե, թափավազքով կատարել նետումներ՝ ցուցաբերելով բարձր արդյունքներ:</p> <p>Մարզախաղերի ժամանակ ցուցաբերում է տեխնիկական և տակտիկական գործողությունների հստակ կատարում:</p> <p>Կարող է յուրացրած մարզախաղերի ժամանակ հանդես բերել նախաձեռնություն, կազմակերպվածություն, ինքնտիրապետում, հանդուրժողականություն, կատարել համատեղ առաջադրանքներ, համագործակցել:</p> <p>Տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվում է, որոշումներ կայացնում:</p> <p>Գիտի լողի ինքնուրույն մարզումների մեթոդիկան և միջոցները:</p> <p>Սահուն և արագ լողում է բոլոր լողաճերով 200 մետր:</p> <p>Տիրապետում է խեղդվողին փրկելու ձևերին և առաջին օգնության կանոններին:</p> <p>Գիտի դահուկային պարապմունքների առողջարարական նշանակության մասին:</p> <p>Կարող է սահուն կատարել վերելքների,</p>
---	--	---

<p>ձեռքով, ուսի վրայից, աջ և ձախ կողմերից՝ միջին հեռավորությունից, պաշտպանողական և հարձակվողական գործողություններ:</p> <p>Իմանալ վրլեյբոլ խաղի կանոնները:</p> <p>Կարողանալ կատարել գնդակի փոխանցումներ, սկզբնահարվածներ, հարձակողական հարված, շրջափակում, տակտիկական գործողություններ:</p> <p>Կարողանալ հիմնական կանոններով վրլեյբոլ խաղալ:</p> <p>Իմանալ հանդբոլ խաղի կանոնները:</p> <p>Կարողանալ կատարել հանդբոլ խաղի տեխնիկական և տակտիկական գործողությունները:</p> <p>Կարողանալ հիմնական կանոններով հանդբոլ խաղալ:</p> <p>Կարող է հանդբոլի գնդակով կատարել վարում, փոխանցումներ, նետում դարպասին վերևից շարժման մեջ, կանգառով, ցատկով, գնդակը դուրս խփել, որսալ և շրջափակել:</p> <p>Իմանալ ֆուտբոլ խաղի կանոնները, կատարել խաղի հիմնական տեխնիկական և տակտիկական գործողությունները:</p> <p>Կարողանալ հարվածել գլորվող և թռչող գնդակին ոտնաթմբով, գլխով՝ ցատկով և թափավազքով, գնդակը կասեցնել ներքանով, ոտնաթաթի դրսի մասով, ազդրով, կրծքով, գլխով, գնդակի վարում ուղղության և արագություն փոփոխումով, խաբքերով:</p>	<p>հարձակողական գործողություններ: Խաղալ բասկետբոլ կանոնների պահպանումով:</p> <p>Կարողանալ կատարել գնդակի ընդունում փոխանցումներ մեկ և երկու ձեռքերով տարբեր դիրքերից, տարբեր սկզբնահարվածներ վերևից, ներքևից, ուղիղ, պտտվող, հարձակողական հարվածներ՝ տարբեր գոտիներ, շրջափակում՝ անհատական և խմբային, տակտիկական գործողություններ: Խաղալ վրլեյբոլ կանոնների պահպանումով:</p> <p>Կարող է հանդբոլի գնդակով կատարել վարում մրցակցի դիմադրությամբ, խաբուսիկ շարժումներով, արգելքները շրջանցելով, ընդունում և փոխանցումներ տարբեր դրություններից,, նետում դարպասին վերևից շարժման մեջ, կանգառով, ցատկով, հենումով, մրցակցի դիմադրությամբ, 7 և 9 մետրանոց տուգանային նետումներ, գնդակի կասեցում, որսում, հետ մղում, շրջափակում:</p> <p>Կարողանալ հարվածել գլորվող և թռչող գնդակին ոտնաթմբով, գլխով՝</p>	<p>վայրէջքների, դարձումների և արգելակումների տեխնիկական տարրերը:</p> <p>Գիտի սեղանի թենիսի կրթական, առողջարարա-կան և դաստիարակչական նշանակությունը:</p> <p>Կարող է սահուն կատարել սեղանի թենիսի տեխնիկական հնարքները:</p> <p>Գիտի ըմբշամարտի հնարքները և կարող է գոտմարտել ըստ կանոնների:</p> <p>Տիրապետում է շարժողական ընդունակությունների մշակման մեթոդներին և միջոցներին և ինքնուրույն կազմում է համալիրներ:</p> <p>Կարողանում է տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվել և ճիշտ որոշումներ կայացնել դրսևորում է հասարակական ակտիվություն և նախաձեռնություն:</p> <p>Ունենա ֆիզիկական բարձր պատրաստվածություն և ինքնահսկման ու ինքնագնահատման հմտություններ</p>
---	---	---

Գիտենալ առաջին օգնության կանոնները:

Կարողանալ լողալ կիրառական ձևերով:

Գիտենալ դահուկային պարապմունքների առողջարարական նշանակությունը:

Կարողանալ սահուն կատարել վերելքների, վայրէջքների, դարձումների և արգելակումների տեխնիկական տարրերը:

Նկարագրել մկանային ուժի մշակման մեթոդները և միջոցները:

Դրսևորել ուժային և արագաուժային ունակություններ:

Գիտենալ հայ ըմբիշներին և նրանց նվաճումները:

Դրսևորել արիություն, համարձակություն, մրցակցի նկատմամբ հարգանքի վարքագիծ:

Գիտենալ տուրիզմի առողջարարական, կրթական, դաստիարակչական նշանակությունը:

Իմանալ կոփման բնական միջոցները և կիրառման եղանակները:

Կարողանալ կողմնորոշվել տեղանքում քարտեզով և բնական կողմնորոշիչներով:

Գիտենալ սեղանի թենիսի կրթական, առողջարարական և դաստիարակչական նշանակությունը:

Կարողանալ կատարել սեղանի թենիսի տեխնիկական հնարքները:

Կարողանալ դրսևորել նախաձեռնություն, ինքնուրույնություն, ինքնատիրապետում,

ցատկով և թափավազքով, գնդակը կասեցնել ներբանով, ոտնաթաթի դրսի մասով, ազդրով, կրծքով, գլխով, գնդակի վարում ուղղության և արագության փոփոխումով, խաբքերով, գնդակի խլում արտանքով և սահանկումով, գնդակի որսում, հետ մղում, շեղում մեկ և երկու ձեռքերով՝ ընկնելով և ցատկելով:

Կարողանալ լողալ կիրառական ձևերով:

Կարողանալ լողալ կարճ և երկար լողատարածություն բրաս, դելֆին, կրոլ կրծքի վրա և մեջքի վրա:

Դրսևվորել կամային որակներ, համարձակություն, փոխօգնություն:

Կարողանալ կատարել միաժամանակյա չմշկային ընթացքի տեխնիկական տարրերը:

Կարողանալ քայլանցումով և ցատկով հաղթահարել արգելքները:

Կարողանալ կողասահքով կտրուկ արգելակել:

Կարողանալ հավասարաչափ արագությամբ հաղթահարել միջին և երկար տարածություններ:

Կարողանալ դրսևորել կամային ունակություններ, վստահության և

սեփական շարժողական գործողությունների գնահատման կարողություն:

Կարողանալ համագործակցել, լինել բարի, ազնիվ, հանդուրժող, ունենալ հարգանք բոլորի նկատմամբ:

Ցուցաբերել կարգապահություն, տոկունություն, նպատակասլացություն, համարձակություն, կարողանալ հաղթահարել դժվարությունները:

Կարողանալ դրսևորել արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ:

համարձակության վարքագիծ:

Գիտենալ տուրիզմի սոցիալական և կիրառական նշանակությունը:

Կարողանալ հաղթահարել բնական արգելքները:

Կարողանալ տուժածին ցույց տալ առաջին օգնություն:

Կարողանալ կատարել ապահովման և ինքնապահովման հնարքները:

Դրսևորել կարգապահություն, փոխօգնություն,

համագործակցություն, կամք:

Գիտենալ սեղանի թենիսի ինքնուրույն պարապմունքների կազմակերպման ձևերը:

Տիրապետել կտրված և պտտված հարվածների տեխնիկային:

Կարողանալ հմտորեն կատարել սկզբնահարվածներ:

Կարողանալ մարզասարքերի վրա կատարել ուժային վարժություններ:

Դրսևորել ծանրաձողով ուժային վարժություններ կատարելու հմտություններ:

Դրսևորել ուժ և արագաուժային ընդունակություններ:

Գիտենալ ըմբշամարտի դերն ու

	<p>նշանակությունը պատանիներին զինվորական ծառայության նախապատրաստման գործում:</p> <p>Կատարել շրջումներ, գցումներ տարբեր դիրքերից, գիտենալ դրանց պաշտպանությունները և հակահնարքները:</p> <p>Կարողանալ դրսևորել նախաձեռնություն, ինքնուրույնություն, ինքնատիրապետում, սեփական շարժողական գործողությունների գնահատման կարողություն:</p> <p>Կարողանալ համագործակցել, լինել բարի, ազնիվ, հանդուրժող, ունենալ հարգանք բոլորի նկատմամբ:</p>	
--	---	--

Միջնակարգ (ավագ) ծրագիր. վերաբերմունքը և արժեքները.

Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մշտական պահանջ, առողջության պահպանման և ներդաշնակ զարգացման իրագործում:

Սեփական առողջական վիճակի, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի պահպանում:

Օլիմպիզմի և օլիմպիական շարժման հումանիստական, համամարդկային գաղափարախոսության արժեքների ըմբռնում և իրագործում:

Բարոյականային հատկանիշներ՝ փոխօգնության պատրաստակամություն և հայրենասիրություն, հանդուրժողականություն, հարգանք ուրիշի նկատմամբ և օգնության հասնելու պատրաստակամություն:

Առարկայի ուսումնառության ակնկալվող և չափելի վերջնարդյունքները նկարագրում են այն գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքը և արժեքները, որոնք ձևավորվում են սովորողի մոտ առարկայի ծրագրի յուրացման շնորհիվ:

4. ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- 1) Հանրակրթական դպրոցի ֆիզիկական կուլտուրա առարկայի բովանդակությունը կառուցվում է գիտության, տեխնոլոգիաների, մշակույթի և սպորտի ժամանակակից նվաճումներին համապատասխան:
- 2) Նյութի ներկայացման հաջորդայնությունը հիմնված է սահմանափակ թվով հիմնարար գաղափարների վրա: Հիմնարար գաղափարներից են բխում ուսումնասիրության համար ընտրված բոլոր վարժություններն և մարզաձևերը:
- 3) Առարկայի ուսումնական նյութի բովանդակությունը ներկայացվում է սովորողների տարիքային զարգացման առանձնահատկություններին համապատասխան, որպեսզի նրանք հնարավորություն ունենան ինքնուրույն կամ ուսուցչի ուղղորդմամբ յուրացնելու այն:
- 4) Ավագ դպրոցի ֆիզիկական կուլտուրա առարկայի բովանդակությունը հնարավորություն է ընձեռում սովորողներին հետագայում մասնագիտանալու այնպիսի ոլորտներում, որտեղ ֆիզիկական յուլտուրան և սպորտը էական նշանակություն ունի:
- 5) Ֆիզիկական կուլտուրա առարկայի բովանդակությունը կառուցվում է այնպես, որ գիտելիքների և կարողությունների զարգացմանը զուգընթաց՝ այն նպաստի սովորողների վերաբերմունքի և արժեքային համակարգի ձևավորմանը և սոցիալական հմտությունների զարգացմանը:
Հանրակրթական դպրոցի ֆիզիկական կուլտուրա առարկայի բովանդակությունը հստակեցվում և կոնկրետացվում է ուսումնական ձեռնարկներում և ուղեցույցներում:

Թեմաները և դրանց բովանդակությունը ներառում են.

1. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ» բաժին

Ընդհանուր տեղեկություններ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, նրա նշանակության վերաբերյալ: Ֆիզիկական դաստիարակության նշանակությունը առողջության ամրապնդման և կեցվածքի ձևավորման համար:

Անձնական հիգիենան և ֆիզիկական վարժություններով պարապմունքների հիգիենիկ կանոնները:

Կոփման կանոնները և նշանակությունը:

Ֆիզիկական կուլտուրայի դասերի և պարապմունքների ժամանակ անվտանգության կանոնների պահպանումը:

Տեղեկություններ օլիմպիական շարժման և օլիմպիական խաղերի վերաբերյալ:

Տեղեկություններ անվանի մարզիկների վերաբերյալ:

Ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստականության ինքնահսկման մեթոդիկան:

Առողջ ապրելակերպը դպրոցականի կյանքում:

ՀՀ Ազգային օլիմպիական կոմիտեի գործառույթները:

Արդարացի խաղի նշանակությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գործնեությունում:

2. «Մարմնամարզական վարժություններ» բաժին

Շարային վարժություններ:

Ընդհանուր զարգացնող վարժություններ:

Մագլցման վարժություններ:

Հավասարակշռության վարժություններ:

Ակրոբատիկական վարժություններ:

Հենացատկեր:

Կախեր և հենումներ:

Պարային վարժություններ:

Ռիթմիկ մարմնամարզության վարժություններ:

«Աթլետիկական վարժություններ» բաժին

Քայլքի տարատեսակներ:

Վազքեր:

Ցատկեր:

Նետումներ:

3. «Շարժախաղեր» բաժին

Վազքի կարողության ամրապնդման, արագաշարժության մշակման և տարածության մեջ կողմնորոշմանը նպաստող խաղեր:

Ցատկերի կարողության ամրապնդման, արագաուժային ընդունակությունների մշակմանը նպաստող խաղեր:

Հեռավորության և նշանակետին նետման կարողության ամրապնդման, արագաուժային ընդունակությունների մշակման խաղեր:

Գնդակը բռնելու, փոխանցելու, նետելու և վարելու կարողության ամրապնդման և տարածության մեջ կողմնորոշմանը նպաստող խաղեր:

Շարժումների համաձայնեցման, կոորդինացիոն ընդունակությունների մշակման և փոխգործողությունների յուրացմանը նպաստող խաղեր:

Ազգային խաղերի տարրեր:

Զվարճալի ֆուտբոլ՝ ֆուտբոլը որպես երեխաների ժամանցի լավագույն միջոց:

4. «Մարզախաղեր» բաժին

Բասկետբոլ:

Վոլեյբոլ:

Հանդբոլ:

Ֆուտբոլ:

5. «Ընտրովի ուսումնական նյութ» բաժին

Դահուկային պատրաստություն:

Լողի ուսուցում:

Ուժային պատրաստություն:

Սեղանի թենիս:

Տուրիստական պատրաստություն:

Ըմբշամարտ:

Առարկայական ծրագրում թեմաները ձևավորվում են ըստ առարկայի հիմնարար գաղափարների դասակարգման:

Թեմայի բովանդակությունը ձևավորվում է թեմայի ուսուցման արդյունքում ակնկալվող վերջնարդյունքների հիման վրա:

1) Թեմաների ուսումնառության ակնկալվող և չափելի վերջնարդյունքները մանրամասն նկարագրված են ծրագրում յուրաքանչյուր թեմայի նպատակներին, բովանդակությանը և խաչվող հասկացություններին համապատասխան:

Թեմայի ուսումնառության ակնկալող և չափելի վերջնարդյունքները նկարագրում են այն գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքը և արժեքները, որոնք ձևավորվում են սովորողի մոտ թեմայի յուրացման շնորհիվ:

2) Առաջարկվող ժամաքանակի բաշխումը՝ ըստ դասարանների

N	Բաժիններ / դասարաններ	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ	7-րդ	8-րդ	9-րդ	10-րդ	11-րդ	12-րդ	Σ ժամեր՝ ըստ բաժինների
	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	60
2.	Աթլետիկական վարժություններ	10	12	14	14	14	14	14	14	14	14	14	14	162
3.	Մարմնամարզական վարժություններ	10	10	12	12	12	12	12	12	12	12	12	12	140
4.	Շարժախաղեր	30	32	32	32	--	--	--	--	--				126
5.	Մարզախաղեր	--	--	--	--	32	32	32	32	32	32	32	32	256
6.	Ընտրովի ուսումնական նյութ	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	5	60
7.	Σ ժամեր՝ ըստ դասարանների	60	64	68	68	68	68	68	68	68	68	68	68	804

Առարկայի ծրագրում տրվում է առարկայի ուսուցման համար երաշխավորվող ժամաքանակի միջակայքը կամ մոտավոր ժամաքանակը՝

- ըստ աստիճանի,
- ըստ տարվա,
- ըստ բաժինների:

5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ

ՆՅՈՒԹԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով տեղեկատվական ժամանակակից միջոցների (համակարգիչ, հեռուստացույց և այլն) լայն տարածման պայմաններում դպրոցահասակ երեխաների սակավաշարժությունը, բակային խաղերում նրանց ներգրավվածության ցածր աստիճանը, ինչպես նաև այդ տարիքի երեխաների՝ սպորտով զբաղվելու շահագրգռության ցածր մակարդակը՝ ենթադրվում է, որ հատկապես միջին և

ավագ դասարանների աշակերտների շարժողական ակտիվության պակասը լրացնելու անհրաժեշտություն կա: Այդ բացը պետք է լրացվի առավելապես դպրոցի ֆիզիկական կուլտուրայի դասերի միջոցով: Սակայն դպրոցահասակ երեխաների շրջանում արձանագրված վատթարացող շարժողական պատրաստականության հիմնական պատճառը հավանաբար կապված է այդ դասերի բովանդակային ու կազմակերպչական կողմերի հետ: Ուստի այս ամենը թելադրում է միջին և ավագ դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության գործընթացը կազմակերպել նոր, առավել արդյունավետ, գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիայով (մեթոդիկայով), որն էլ ավելի հետաքրքիր կդարձնի դասի բովանդակությունը:

Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցության նկարագրությունը.

Ծրագրի վերջում տրված է ֆիզիկական կուլտուրա առարկայի դասերի և արտադասարանական աշխատանքների կազմակերպման համար տիպային մարզադահլիճի և մարզահրապարակի, ինչպես նաև անհրաժեշտ մարզական գույքի ցանկը:

Ուսուցչին տեսական և մեթոդական օգնության նպատակով տրված է նաև անհրաժեշտ գրականության ցանկը, որտեղ նշված են առարկայական ծրագրի ուսումնադաստիարակչական գործընթացը հնարավորինս ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ ձեռնարկներ և այլ օժանդակ մասնագիտական գրականություն:

Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցության նկարագրությունը ներառում է առարկայի դասվանդման համար պահանջվող նյութատեխնիկական և մեթոդական հիմքի նկարագրությունը:

1. Ընդհանրական խաչվող հասկացություններ

Դրանք առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

Դրանք պետք է մեծ ուշադրության արժանանան դպրոցի բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների, այդ թվում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցման ժամանակ:

Առանձնացվում են 6 այդպիսի առանցքային գաղափարներ.

- ✓ օրինաչափություններ,
- ✓ համակարգեր և մոդելներ,
- ✓ անհատներ և հարաբերություններ,
- ✓ կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ,
- ✓ անհատական և միջանձնային արտահայտում,
- ✓ արդարություն և զարգացում:

1. Օրինաչափություններ

Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ քայլքի, վազքի կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք: Օրինաչափությունների ճանաչողության առաջին քայլերից մեկը դասակարգումն է, որն իրականացվում է նմանությունների ու տարբերությունների բացահայտման շնորհիվ: Ֆիզիկական վարժությունները կարող են դասակարգվել տեսանելի հատկանիշների կամ նմանատիպ գործառույթների հիման վրա: Դասակարգումը հնարավորություն է տալիս շարժումների և ֆիզիկական վարժությունների ահռելի բազմազանությունը համակարգելու սահմանափակ թվով խմբերում:

2. Համակարգեր և մոդելներ

Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:

3. Անհատներ և հարաբերություններ

Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:

4. Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ

Սովորողներն ուսումնասիրում են մարզական ոլորտի տարբեր մարդկանց պատմությունները, ինչպես նաև ֆիզիկական վարժություններով մարզումների դերը տարբեր ժամանակների նշանավոր մարդկանց կյանքում:

5. Անհատական և ստեղծարար արտահայտում

Սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:

6. Արդարություն և զարգացում

Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը, մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները:

6. ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների գնահատումը. Ֆիզիկական կուլտուրա ուսումնական առարկան ամփոփվում է ստուգարքով, որը ենթադրում է ֆիզիկական վարժությունների համալիրների նորմատիվների հանձնում:

Գնահատման հիմնական սկզբունքներն են՝

<ul style="list-style-type: none"> ✓ արդարությունը, ✓ հուսալիությունը, ✓ անկողմնակալությունը , ✓ հավաստիությունը, 	<ul style="list-style-type: none"> ✓ հիմնավորվածությունը , ✓ մատչելիությունը, ✓ թափանցիկությունը:
--	---

1-ին դասարանի թեմաների բաշխումը՝ ըստ մակարդակների, առաջարկվում է 60 ժամ

Բաժին	Թեմա	Հիմնական գաղափարներ
1. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ	1.1 Ֆիզիկական դաստիարակության նշանակությունը առողջության ամրապնդման համար: 1.2 Տեղեկություններ օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի մասին: 1.3 Քայլքը, վազքը, ցատկերը, մազլցումը, դահուկավազքը և լողը՝ որպես մարդու տեղաշարժման կարևորագույն միջոցներ: 1.4 Անվտանգության կանոնների պահպանումը ֆիզիկական կուլտուրայի դասերին:	Առողջություն և նվաճումներ
2. Աթլետիկական վարժություններ	1. Քայլքեր, 2. վազքեր, 3. ցատկեր, 4. նետումներ:	Շարժում և զարգացում Սպորտ և մրցակցություն
3. Մարմնամարզական վարժություններ	1. Շարային վարժություններ, 2. ընդհանուր զարգացնող վարժություններ, 3. մազլցման վարժություններ, 4. հավասարակշռության վարժություններ, 5. ակրոբատիկական վարժություններ, 6. ռիթմիկ մարմնամարզական վարժություններ, 7. պարային վարժություններ:	Շարժում և զարգացում Սպորտ և մրցակցություն
4. Շարժախաղեր	4.1 Վազքի ունակության ամրապնդման խաղեր: 4.2 Ցատկերի ունակության ամրապնդման խաղեր: 4.3 Նետումների ունակության ամրապնդման խաղեր: 4.4 Գնդակը փոխանցելու և վարելու ունակության ամրապնդման խաղեր: 4.5 Կորդդինացիոն ընդունակությունների մշակմանը նպաստող խաղեր: 4.6 Ազգային խաղերի տարրերով	Սպորտ և մրցակցություն

	խաղեր: 4.7 «Ձվարճալի ֆուտբոլ» տարրերով խաղեր:	
5. Ընտրովի ուսումնական նյութ	5.1 Լողի ուսուցում: 5.2 Դահուկային պատրաստություն:	Շարժում և զարգացում Սպորտ և մրցակցություն

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ 1-12-րդ դասարաններ

Թեմա 1
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ – 5 ժամ
Նպատակը
<ul style="list-style-type: none"> ▪ Նպաստել երեխայի հարմարվելուն դպրոցական կյանքին: ▪ Պատկերացում տալ ֆիզիկական կուլտուրայի առողջարարական նշանակության մասին: ▪ Գիտելիքներ հաղորդել օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի մասին: ▪ Պատկերացում տալ մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ ֆիզիկական վարժաձևերի մասին: ▪ Ծանոթացնել ֆիզիկական վարժությունների կատարման ժամանակ անվտանգության կանոններին:
Վերջնարդյունքները
<ul style="list-style-type: none"> ▪ Իմանա ֆիզիկական վարժությունների դերն ու դրանց նշանակությունը առողջության ամրապնդման գործում: ▪ Պատկերացում ունենա օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի կանոնների վերաբերյալ: ▪ Պատկերացում ունենա քայլքի, վազքի, ցատկերի, մագլցման, դահուկավազքի և լողի՝ որպես մարդու տեղաշարժման կարևորագույն միջոցների մասին, կարևորի ֆիզիկական վարժությունների ժամանակ անվտանգության կանոնների պահպանումը:
Բովանդակություն
<ul style="list-style-type: none"> • Ֆիզիկական դաստիարակության նշանակությունը առողջության ամրապնդման համար: • Տեղեկություններ օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի մասին: • Քայլքը, վազքը, ցատկերը, մագլցումը, դահուկավազքը և լողը որպես մարդու տեղաշարժման կարևորագույն միջոցներ:

- Անվտանգության կանոնների պահպանումը ֆիզիկական կուլտուրայի դասերին:

Առաջարկվող գործունեության ձևեր	Ընդհանրական խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> • Ծնողների օգնությամբ համացանցից և գրականությունից ուսումնասիրում և ներկայացնում են Ֆիզիկական դաստիարակության, օրվա ռեժիմի և անձնական հիգիենայի կարևորության վերաբերյալ նյութեր: • Դասարանում կազմում են իրենց տարբերակը քայլքի, վազքի, ցատկերի, մագլցման, դահուկավազքի և լողի՝ որպես մարդու տեղաշարժման կարևորագույն միջոցների և ֆիզիկական վարժությունների ժամանակ անվտանգության կանոնների պահպանման մասին: 	<ul style="list-style-type: none"> • Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ Սովորողներն ուսումնասիրում են մարզական ոլորտի տարբեր մարդկանց պատմությունները, ինչպես նաև ֆիզիկական վարժություններով մարզումների դերը տարբեր ժամանակների նշանավոր մարդկանց կյանքում: • Անհատական և ստեղծարար արտահայտում Սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում: • Արդարություն և

	<p>զարգացում</p> <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպություններին և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p>
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p>	
<p>Պատմություն – Պատմական տվյալների իմացություն:</p>	
Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ	
<p>S1, S2, S3, S15, S22, S23, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S33, S35, S36, S37, S38</p>	

Թեմա 2	
Աթլետիկական վարժություններ – 10 ժամ. քայլքեր, վազքեր, ցատկեր, նետումներ	
Նպատակը	
<ul style="list-style-type: none"> Սովորեցնել քայլքի, վազքի, ցատկերի և նետումների տեխնիկապես ճիշտ կատարումը: Նպաստել կեցվածքի ձևավորմանը և առողջության ամրապնդմանը: Նպաստել շարժումների համաձայնեցման, տարածության մեջ կողմնորոշման, կորդիինացիոն կարողությունների զարգացմանը: Նպաստել գնդակը նետելու, փոխանցելու և ընդունելու կարողությունների զարգացմանը: Նպաստել արագաշարժությանը, դիմացկունությանը, ուժի, ճարպկության, ճկունության զարգացմանը: 	
Վերջնարդյունքները	
<ul style="list-style-type: none"> Պատկերացում ունենա «Աթլետիկա» մարզաձևի մասին: Կարողանա ճիշտ քայլել, վազել 20 մ, հավասարաչափ դանդաղ վազել 3 րոպե, տեղից հեռացատկել, բարձրացատկել, ցատկել ցատկապարանով, թենիսի գնդակը նետել նշանակետին, մեծ գնդակը նետել և բռնել: 	
Բովանդակություն	
<ul style="list-style-type: none"> Քայլքը և տարատեսակները: Քայլք, քայլք ոտնաթաթերին, կիսակքանստած, կրունկների վրա՝ ձեռքերի տարբեր դիրքերով: Վազքը քայլքի հերթագայությամբ, դանդաղ վազք մինչև 2 րոպե, մաքրքավազք 2 x 10 մ: Ցատկեր ցատկապարանով, հեռացատկ տեղից, բարձրացատկ մեկ ոտքի հրումով (40-50 սմ): Նետումներ՝ թենիսի գնդակի նետում նպատակակետին, նետում հեռավորություն, մեծ գնդակի փոխանցում և ընդունում: 	
Առաջարկվող գործունեության ձևեր	Ընդհանրական խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> Առանց գործիքների և դրանց կիրառմամբ աթլետիկական վարժությունների կատարում: 	<ul style="list-style-type: none"> Օրինաչափություններ Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ քայլքի, վազքի կառուցվածքում, շարժումների հերթագայության

մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:

- Համակարգեր և մոդելներ
Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Աթլետիկա» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:
- Անհատներ և հարաբերություններ
Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և

	բարեվարքության գիտակցումը:
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:</p> <p>Երաժշտություն:</p> <p>Մաթեմատիկա- թվագիտություն, հաշվողական կարողություններ:</p> <p>Կենսաբանություն- մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:</p>	
Կապը հանրակրթության չափորոշիչի վերջնարդյունքների հետ	
S1, S2, S3, S15, S22, S23, S24, S25, S26, S27, S28, S29, S30, S33, S35, S36, S37, S38	

Թեմա 3

Մարմնամարզական վարժություններ - 10 ժամ. շարային վարժություններ, ընդհանուր զարգացնող վարժություններ, ակրոբատիկական վարժություններ, մագլցումներ, ռիթմիկ մարմնամարզության վարժություններ

Նպատակը

- Սովորեցնել շարային հրահանգների, շարափոխումների, ձեռքերի և ոտքերի հիմնական շարժումների, մագլցելու, հենումների և գլորումների կատարումը:
- Ձևավորել հավասարակշռությունը պահպանելու, երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ կատարելու, տարբեր շարժումները համաձայնեցնելու կարողությունները:
- Մշակել ճիշտ կեցվածքը:
- Զարգացնել շարժողական ունակությունները և հմտությունները:
- Սովորեցնել շնչառության ճիշտ համաձայնեցումը շարժումների հետ:

Վերջնարդյունքները

- Կարողանա կատարել շարային հրահանգները, շարափոխումները միատողանից երկտողանի, միասյուն շարքից երկսյուն շարքի:
- Կարողանա մագլցել, քայլել մարզանստարանի վրայով, գլորվել, մարզապատից կախ դրությունում՝ ոտքերը ծալել և ուղղել, երաժշտության ռիթմին համապատասխան քայլել, վազել, ցատկել:

Բովանդակություն

Շարային վարժություններ, շարվել տողանով, միասյունով, «Շարվել», «Տրվել», «Քայլո~վ մարշ», «Կանգ ա՛ո» հրահանգների կատարում, շարափոխում տողանից շրջանի, միասյունից երկսյունի, դարձումներ տեղում աջ և ձախ, կից քայլերով բացազատվել կողմ տարածած ձեռքերի չափով:

Առաջարկվող գործունեության ձևեր	Ընդհանրական խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none">• Առանց գործիքների և դրանց կիրառմամբ ֆուտբոլ մարզախաղի վարժությունների կատարում:	<ul style="list-style-type: none">• Անհատական և ստեղծարար արտահայտում Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:• Արդարություն և զարգացում Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները,

	<p>ոեսությունների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p> <ul style="list-style-type: none"> • Համակարգեր և մոդելներ Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Ֆուտբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ: • Անհատներ և հարաբերություններ Սովորողներն ուսումնասիրում են մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
--	--

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ, մոդելավորում:

Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 8

Ընտրովի ուսումնական նյութ – 5 ժամ. լողի ուսուցում, դահուկային պատրաստություն

Նպատակը

- Ուսուցանել դահուկավազքի տեխնիկայի կանոնները:
- Ձևավորել վերելքների, վայրէջքների, դարձումների և արգելակումների տեխնիկական տարրերի կատարման հմտությունները:
- Ձևավորել տարբեր ոճերով լողալու հմտություններ:
- Տեղեկություններ տալ առաջին օգնության մասին:

Վերջնարդյունքները

- Գիտենա առաջին օգնության կանոնները:
- Կարողանա լողալ կիրառական ձևերով:
- Դրսևորի կամային որակներ, համարձակություն, վստահություն:
- Իմանա դահուկային պարապմունքների առողջարարական նշանակության մասին:
- Կարողանա սահուն կատարել վերելքների, վայրէջքների, դարձումների և արգելակումների տեխնիկական տարրերը:
- Դրսևորի նախաձեռնություն, ինքնուրույնություն, ինքնատիրապետում, սեփական շարժողական գործողությունների գնահատման կարողություն:
- Կարողանա համագործակցել, ցուցաբերի բարություն, ազնվություն, հանդուրժողականություն, հարգանք բոլորի նկատմամբ:
- Դրսևորի արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ:

Բովանդակություն

Դահուկային պատրաստության տեխնիկայի մեթոդները և միջոցները: Ծանոթություն դահուկային սպորտի պատմությանը: Միաժամանակյա մեկքայլ և անքայլ ընթացքներ: Վերելք «կիսատեղննաձև»: Արգելակում հենումով և կողմնային սահումով: Ոտնափոփոխումով դարձում՝ անցնելով դահուկափայտերով «կառուցված» դարպասների միջով: Հավասարաչափ արագությամբ տեղաշարժ դահուկներով մինչև 2 կմ (տղաներ) և 1.5 կմ (աղջիկներ): Կրկնողական դահուկաընթացք. 3-4 անգամ 10-ական

մետր վազքահատվածների անցում արագությամբ:

Լողի ուսուցման տեխնիկայի մեթոդները և միջոցները: Կրծքի և մեջքի վրա կրող լողաոճի տեխնիկայի կատարելագործում: Կրծքի և մեջքի վրա կրող լողաոճի մեկնարկների և դարձումների կատարելագործում: Բրաս լողաոճով ոտքերի, ձեռքերի աշխատանքի և շնչառության զուգակցում: Բրաս լողաոճի մեկնարկներ և դարձումներ: 25 մ լողատարածության կրկնակի լողանցում կրող և բրաս լողաոճերով: Ջրացատկ խորը մասում:

Առաջարկվող գործունեության ձևեր`	Ընդհանրական խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> Առանց գույքի և դրանց կիրառմամբ դահուկային պատրաստության և լողի վարժությունների կատարում: 	<ul style="list-style-type: none"> Օրինաչափություններ Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ սահող քայլքերում, դահուկավազքում կամ լողում թիավարման և դարձումների ժամանակ, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք: Համակարգեր և մոդելներ Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Դահուկային սպորտ» և «Լող» մարզաձևերը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից և մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ: Անհատներ և հարաբերություններ Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները,

	<p>արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն</p> <p>ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	--

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:

Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:

ՆԶՊ – արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 9

Ընտրովի ուսումնական նյութ – 5 ժամ. սեղանի թենիս

Նպատակը

- Տեղեկացնել սեղանի թենիսի ստեղծման և զարգացման մասին:
- Ծանոթացնել սեղանի թենիսի մարզական գույքին՝ ռակետ և գնդակ:
- Ուսուցանել սեղանի թենիսի տեխնիկայի հնարքները:

Վերջնարդյունքները

- Իմանա սեղանի թենիսի ստեղծման և զարգացման պատմությունը:
- Կատարի սեղանի թենիսի տեխնիկայի հնարքները:
- Դրսևորի նախաձեռնություն, ինքնուրույնություն, ինքնատիրապետում, սեփական

շարժողական գործողությունների գնահատման կարողություն:

- Ցուցաբերի համագործակցություն, բարություն, ազնվություն, հանդուրժողականություն, հարգանք բոլորի նկատմամբ:
- Դրսևորի արագաշարժություն, դիմացկունություն, դիպուկություն, ճարպկություն, ուժային, ցատկունակության հմտություններ:

Բովանդակություն

Ծանոթություն սեղանի թենիսի պատմությանը և նրա՝ որպես օլիմպիական մարզաձևի դերին:

Սեղանի թենիսի տեխնիկական հնարքների ուսուցում:

Երկկողմ խաղ:

Առաջարկվող գործունեության ձևեր

Ընդհանրական խաչվող հասկացություններ

- Առանց գույքի և դրանց կիրառմամբ սեղանի թենիս մարզաձևի վարժությունների կատարում:

- Անհատական և ստեղծարար արտահայտում
 Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:
- Արդարություն և զարգացում
 Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):
- Համակարգեր և մոդելներ
 Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Սեղանի թենիս» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն

	<p>է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <ul style="list-style-type: none"> • Անհատներ և հարաբերություններ <p>Սովորողներն ուսումնասիրում են մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	---

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:

Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:

Պատմություն – պատմական տվյալների իմացություն:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

6-րդ դասարանի թեմաների բաշխումը՝ ըստ մակարդակների, առաջարկվում է 68 ժամ		
Բաժին	Թեմա	Հիմնական գաղափարներ
1. Ֆիզիկական կուլտուրայի և	1.1 Առողջ ապրելակերպը	Առողջություն և

սպորտի մասին գիտելիքներ	դպրոցականների կյանքում և ճիշտ կեցվածքի պահպանման հմտության ձևավորումը: 1.2 Հայ մարզիկների մասնակցությունը ժամանակակից օլիմպիական խաղերին: 1.3 Սպորտային էթիկա: 1.4 Ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկում:	նվաճումներ
2. Աթլետիկական վարժություններ	1 Վազքեր 2 Ցատկեր 3 Նետումներ	Շարժում և զարգացում Սպորտ և մրցակցություն
3. Մարմնամարզական վարժություններ	1. Շարային վարժություններ 2. Ընդհանուր զարգացնող վարժություններ 3. Կախեր և հենումներ, 4. Հենացատկեր 5. Ակրորատիկական վարժություններ 6. Մագլցման վարժություններ 7. Ռիթմիկ մարմնամարզության վարժություններ	Շարժում և զարգացում Սպորտ և մրցակցություն
4. Մարզախաղեր	4.1 Բասկետբոլ 4.2 Վոլեյբոլ 4.3 Հանդբոլ 4.4 Ֆուտբոլ	Սպորտ և մրցակցություն
5. Ընտրովի ուսումնական նյութ	5.1 Լողի ուսուցում 5.2 Դահուկային պատրաստություն 5.3 Սեղանի թենիս 5.4 Ուժային պատրաստություն	Շարժում և զարգացում Սպորտ և մրցակցություն

Թեմա 1

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին գիտելիքներ – 5 ժամ

Նպատակը

- Գիտելիքներ հաղորդել առողջ ապրելակերպի վերաբերյալ:
- Ծանոթացնել ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկման ձևերին:
- Ընդլայնել դպրոցականների գիտելիքները ժամանակակից օլիմպիական խաղերին հայ մարզիկների մասնակցության մասին:
- Տեղեկություն տալ սպորտային էթիկայի մասին:

Վերջնարդյունքները

- Պատկերացում ունենա դպրոցականի կյանքում առողջ ապրելակերպի և ճիշտ կեցվածքի պահպանման կարևորության մասին:

- Ծանոթ լինի ժամանակակից օլիմպիական խաղերում հայ մարզիկների մասնակցությանը:
- Պահպանի սպորտային էթիկան և տիրապետի ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկմանը:

Բովանդակություն

- Առողջ ապրելակերպը դպրոցականների կյանքում և ճիշտ կեցվածքի պահպանման հմտության ձևավորումը:
- Հայ մարզիկների մասնակցությունը ժամանակակից օլիմպիական խաղերին:
- Սպորտային էթիկա:
- Ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկում:

Առաջարկվող գործունեության ձևեր

Ընդհանրական խաչվող հասկացություններ

- Օգտվելով համացանցից և գրականությունից՝ ինքնուրույն ուսումնասիրում և ներկայացնում են դպրոցականների կյանքում առողջ ապրելակերպի և ճիշտ կեցվածքի պահպանման հմտության ձևավորումը, հայ մարզիկների մասնակցությունը ժամանակակից օլիմպիական խաղերին և սպորտային էթիկան:
- Դասարանում խճանկարի միջոցով կազմում են Ֆիզիկական զարգացման և պատրաստվածության ինքնահսկման ձևերի իրենց տարբերկը:

- Կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ
 Սովորողներն ուսումնասիրում են մարզական ոլորտի տարբեր մարդկանց պատմությունները, ինչպես նաև ֆիզիկական վարժություններով մարզումների դերը տարբեր ժամանակների նշանավոր մարդկանց կյանքում:
- Անհատական և ստեղծարար արտահայտում
 Սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ:, Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:
- Արդարություն և զարգացում
 Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական

	<p>կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p>
Միջառարկայական կապեր	
<p>Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում: Ռուսերեն և այլ օտար լեզուներ –կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն: S<S- համակարգչից և համացանցից օգտվելու, նյութի համակարգչային ներկայացման ձևերի իմացություն: Պատմություն –պատմական տվյալների իմացություն:</p>	
Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ	
<p>Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53</p>	

Թեմա 2
<p>Աթլետիկական վարժություններ – 14 ժամ. վազք, ցատկեր, նետումներ</p>
Նպատակը
<ul style="list-style-type: none"> • Ծանոթացնել ցածր մեկնարկից վազքի կատարման տեխնիկային: • Ուսուցանել կարճ և միջին վազքի, էստաֆետային վազքի, «ոտքերը կծկված» եղանակով հեռացատկի, «քայլանցում» եղանակով բարձրացատկի տեխնիկան: • Ամրապնդել փոքր և լցրած գնդակների նետման տեխնիկան: • Զարգացնել արագաշարժության, դիմացկունության, ցատկունակության, ուժի, շարժողական ունակություններ: • Դաստիարակել բարոյականային հատկանիշներ, համարձակություն, վճռականություն, նպատակասլացություն:
Վերջնարդյունքները
<ul style="list-style-type: none"> • Ծանոթ լինի ցածր մեկնարկից վազքի, կարճ և միջին վազքի, էստաֆետային վազքի, «ոտքերը կծկված» եղանակով հեռացատկի, «քայլանցում» եղանակով բարձրացատկի կատարման տեխնիկային: • Տիրապետի փոքր և լցրած գնդակների նետման տեխնիկային: • Դրսևորի արագաշարժության, դիմացկունության, ցատկունակության, ուժի, շարժողական ունակությունների բավարար մակարդակ: • Դրսևորի բարոյականային հատկանիշներ, համարձակություն, վճռականություն,

նպատակասլացություն:

Բովանդակություն

Վազքեր: Տեղեկություններ վազքի փուլերի, «մեկնարկի», «մեկնարկային թափքի», «տարածությունում վազքի» և «վերջնարկի» վերաբերյալ:

Վազք արագացումով մինչև 40 մ: Վազք առավելագույն արագությամբ բարձր՝ մեկնարկից 60 մ: Էստաֆետ հանդիպակաց 10-20 մ: Վազք հավասարաչափ և փոփոխական տեմպով 10-12 րոպե:

Ցատկեր: Ծանոթություն հեռացատկի տեխնիկայի փուլերին (ռիթմիկ թափավազք, հրում, ճախրում, վայրէջք) և մրցման կանոններին: Հեռացատկ «ոտքերը կծկված» եղանակով:

Բարձրացատկ 3-5 վազքաքայլով 70 սմ (տղաներ) և 50 սմ (աղջիկներ) ձողի հաղթահարումով:

Նետումներ: Տեխնիկայի տարրերի ելման դրություն, նետման դրություն «ձգված աղեղ», գնդակի բացթողման իմացություն և կատարում: Թենիսի գնդակի նետում 10-12 սմ հեռավորությունից հորիզոնական և ուղղահայաց նպատակին: Թենիսի գնդակի նետում հեռավորություն կամավոր թափավազքով:

Լցրած գնդակի նետում:

Առաջարկվող գործունեության ձևեր

- Առանց գործիքների և դրանց կիրառմամբ աթլետիկական վարժությունների կատարում:

Ընդհանրական խաչվող հասկացություններ

- Օրինաչափություններ
Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ քայլքի, վազքի կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ:
Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:
- Համակարգեր և մոդելներ
Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Աթլետիկա» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից,

	<p>վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <ul style="list-style-type: none"> • Անհատներ և հարաբերություններ Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
--	--

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:

Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

ՆԶՊ – արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 3

Մարմնամարզական վարժություններ- 12 ժամ. շարային վարժություններ, ընդհանուր զարգացնող վարժություններ, կախեր և հենումներ, հենացատկեր, ակրոբատիկական վարժություններ, մագլցման մարժություններ, ռիթմիկ մարմնամարզության վարժություններ:

Նպատակը

- Ուսուցանել շարափոխումների, ընդհանուր զարգացնող վարժությունների, կախերի և հենումների, հենացատկերի, ակրոբատիկական վարժությունների և ռիթմիկ

մարմնամարզության վարժությունների տեխնիկան:

- Զարգացնել շարժողական ունակություններ՝ ճկունություն, կոորդինացիա, ուժ, ցատկունակություն, ռիթմայնություն, արտահայտչականություն, երաժշտության բնույթին համապատասխան շարժումներ:
- Դաստիարակել կարգապահություն, կազմակերպվածություն, համարձակություն, վճռականություն, կամքի ուժ, ինքնուրույնություն:

Վերջնարդյունքները

- Կարողանա ինքնուրույն կատարել շարափոխումներ, ընդհանուր զարգացնող վարժություններ, կախեր և հենումներ, հենացատկեր, ակրոբատիկական և ռիթմիկ մարմնամարզության վարժություններ:
- Ունենա շարժողական ունակություններ՝ ճկունություն, կոորդինացիա, ուժ, ցատկունակություն, ռիթմայնություն, արտահայտչականություն և շարժումների համաձայնեցում:
- Դրսևորի կարգապահություն, կազմակերպվածություն, համարձակություն, վճռականություն, կամքի ուժ, ինքնուրույնություն:

Բովանդակություն

Շարային վարժություններ: Շարային քայլք: Շարափոխում երկայունի և քառասյունի անջատումով և միաձուլումով:

Ընդհանուր զարգացնող վարժություններ: Ընդհանուր զարգացնող վարժություններ առանց առարկաների: Ընդհանուր զարգացնող վարժություններ զույգերով: Ընդհանուր զարգացնող վարժություններ մեծ և լցված գնդակներով, կցագնդերով, մարզափայտերով (տղաներ): Վարժություններ օղերով, զույգերով, մեծ գնդակներով, մարզափայտերով (աղջիկներ): Կեցվածքի ձևավորման վարժություններ:

Կախեր և հենումներ: Տղաներ՝ մեկ ոտքի թափով և մյուսի հրումով վերելք՝ շրջվելով ընդունելով հենում դրությունը: Ետ թափով վարցատկ: Ոտքերը զատած, ազդրին նստած դրությունից վարցատկ դարձումով: Աղջիկներ՝ ոստյանով ընդունել ցածր ձողին հենում դրությունը: Վարցատկ դարձումով: Թափահարումներ ծալվելով:

Հենացատկեր: 100-110 սմ բարձրությամբ, լայնակի տեղադրված այծի վրայով հենացատկ՝ «ոտքերը զատած» եղանակով:

Ակրոբատիկական վարժություններ: Երկու գլուխկոնձի միաձույլ: Կանգնած դրությունից «Կամուրջ» վարժակցի օգնությամբ:

Մագլցման վարժություններ: Պարանամագլցում. տղաները՝ մագլցում «երկու հանգով», աղջիկները՝ «երեք հանգով»:

Ռիթմիկ մարմնամարզության վարժություններ: Կատարել ուսին ծալած ձեռքերի բարձրացում և իջեցում, ծալումներ և բացումներ: Դաստակի սեղմումներ՝ ձեռքերը առաջ, կողմ, վեր: Ափերի նախաբազուկների տարբեր դիրքեր, ծափեր, կողմեր տանել: Ոտքերը զատած դրությունից ձեռքերը գոտկատեղին, դարձումներ աջ և ձախ: Ձեռքերը առաջ տանել տարբեր կողմերի շրջադարձներով: Ոտքերի բարձրացում և իջեցում գլխի միաժամանակյա հետ խոնարհումով:

Կքանիստ, կանգնել, բարձրանալ ոտնաթաթերի վրա: Յուրացված շարժումների համակցումներով համալիրներ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Ընդհանրական խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> Առանց գործիքների և դրանց կիրառմամբ մարմնամարզական վարժությունների կատարում: 	<ul style="list-style-type: none"> Օրինաչափություններ Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ շարային կամ ակրորբատիկ վարժությունների կառուցվածքում, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք: Համակարգեր և մոդելներ Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Մարմնամարզություն» սպորտաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից և խաղերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ: Անհատներ և հարաբերություններ Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական

	<p>շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	---

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:
 Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:
 Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:
 Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 4

Բասկետբոլ – 8 ժամ. մարզախաղի տեխնիկական և խմբային տակտիկական գործողությունները, բասկետբոլիստի կեցվածքը և տեղաշարժեր, գնդակի ընդունում և փոխանցում, գնդակի վարում և նետումներ

Նպատակը

- Ուսուցանել բասկետբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, շարժման ընթացքում գնդակի ընդունման, վարման, փոխանցման և նետման տեխնիկան:
- Ծանոթացնել պաշտպանողական և հարձակողական անհատական տակտիկական գործողություններին:
- Ուսուցանել գնդակի խլման և հետմղման տեխնիկան:
- Ուսուցանել տակտիկական առաջադրանքներով (2*1, 3*1, 3*2, 3*3) խաղ:
- Զարգացնել շարժողական ունակություններ՝ արագաշարժություն, ճարպկություն, դիմացկունություն, կոորդինացիա:
- Դաստիարակել համագործակցության, նախաձեռնության հմտություններ:

Վերջնարդյունքները

- Տիրապետի բասկետբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, շարժման ընթացքում գնդակի ընդունման, վարման, փոխանցման և նետման տեխնիկային:
- Ծանոթ լինի պաշտպանողական և հարձակողական անհատական տակտիկական գործողություններին:
- Տիրապետի գնդակի խլման և հետմղման տեխնիկային:

- Ունենա շարժողական ունակություններ՝ արագաշարժություն, ճարպկություն, դիմացկունություն, շարժումների կորդինացիայի բավարար մակարդակ:
- Դրսևորի համագործակցության, նախաձեռնության հմտություններ:

Բովանդակություն

Բասկետբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը: Կեցվածքով դարձումներ, արագացումներ և կանգառներ:

Գնդակի ընդունում և փոխանցում: Գնդակի ընդունում և փոխանցում շարժման ընթացքում՝ զույգերով և եռյակներով: Գնդակի վարում՝ ինքնուրույն որոշելով կանգառը և փոխանցման ուղղությունը:

Գնդակի վարում: Գնդակի վարում արագության և շարժման ուղղության փոփոխությամբ: Գնդակի վարում աջ և ձախ ձեռքերով՝ մրցակցի դիմադրությամբ:

Գնդակի նետում: Գնդակի նետում օղակին կանգնած դիրքից և շարժման ընթացքում: Գնդակի նետում օղակին մրցակցի դիմադրությամբ:

Ազատ հարձակման տակտիկա: Ծանոթություն պաշտպանության և հարձակման անհատական տակտիկական գործողություններին: Ազատ հարձակման տակտիկա՝ դիքային հարձակում առանց խաղացողների դիրքի փոփոխության: Հարձակում արագ ճեղքման միջոցով (1*0): Հարձակում երկու խաղացողների փոխգործողությամբ:

Անհատական պաշտպանություն: Գնդակի խլում և հետմղում, անհատական և թիմային պաշտպանություն:

Խաղի տիրապետում: Հեշտացված խաղ՝ մինի բասկետբոլի կանոններով: Խաղեր և խաղային առաջադրանքներ (2*1, 3*1, 3*2, 3*3):

Առաջարկվող գործունեության ձևեր

- Առանց գույքի և դրանց կիրառմամբ բասկետբոլ մարզախաղի վարժությունների կատարում:

Ընդհանրական խաչվող հասկացություններ

- Անհատական և ստեղծարար արտահայտում
Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:
- Արդարություն և զարգացում
Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի

	<p>կանոններն ու մրցման օրենքները):</p> <ul style="list-style-type: none"> • Համակարգեր և մոդելներ Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Բասկետբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ: • Անհատներ և հարաբերություններ Սովորողներն ուսումնասիրում են մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
--	---

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:

Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 5

Վոլեյբոլ – 8 ժամ. մարզախաղի տեխնիկան և խմբային տակտիկական գործողությունները, վոլեյբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը, գնդակի փոխանցում և ընդունում, սկզբնահարված, ուղիղ հարձակողական հարված և հարձակողական տակտիկա

Նպատակը

- Հետաքրքրություն առաջացնել վոլեյբոլ մարզաձևի նկատմամբ:
- Ուսուցանել վոլեյբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման, սկզբնահարվածի և ուղիղ հարձակողական հարվածի տեխնիկան:
- Ուսուցանել ազատ և դիրքային հարձակման տակտիկական գործողությունները:
- Ուսուցանել վոլեյբոլ խաղալ փոքրաթիվ 3*3, 4*4 խաղացողներով, փոքրացված խաղադաշտում:
- Զարգացնել շարժողական ունակություններ՝ արագաշարժություն, ռեակցիա, ցատկունակություն, կոորդինացիա:
- Դաստիարակել կարգապահություն, համագործակցություն, փոխօգնություն, պատասխանատվություն:

Վերջնարդյունքները

- Տիրապետի վոլեյբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, փոխանցման, սկզբնահարվածի և ուղիղ հարձակողական հարվածի տեխնիկային:
- Ծանոթ լինի ազատ և դիրքային հարձակման տակտիկական գործողություններին:
- Դրսևորի համագործակցության, նախաձեռնության, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ:
- Ցուցաբերի արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ:

Բովանդակություն

Վոլեյբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը: Վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժվել կից քայլերով դեպի աջ, ձախ, առաջ ու հետ, դեմքով և մեջքով առաջ: Արագ պոկումներ տեղից տարբեր ուղղություններով և կանգառներ:

Գնդակի փոխանցում և ընդունում: Գնդակի փոխանցում գլխավերևում: 2-3 մ հեռավորության վրա գնդակի ընդունում երկու ձեռքով ներքևից:

Սկզբնահարված և ուղիղ հարձակողական հարված: Ներքևից ուղիղ սկզբնահարված ցանցից 6 մ հեռավորության վրա: Խաղընկերոջ վեր նետած գնդակին ուղիղ հարձակողական հարված: Յուրացված տարրերի համակցում՝ գնդակի ընդունում,

փոխանցում և հարձակողական հարված: Ազատ հարձակման տակտիկա:

Հարձակողական տակտիկական գործողություններ: Դիրքային հարձակում՝ առանց փոխելու խաղացողների դիրքը:

Խաղի տիրապետում: Երկկողմ խաղ մինի վոլեյբոլի կանոններով: Երկկողմ խաղ փոքրաթիվ խաղացողներով (3*3, 4*4) և փոքր խաղադաշտում:

Առաջարկվող գործունեության ձևեր	Ընդհանրական խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none">• Առանց գույքի և դրանց կիրառմամբ վոլեյբոլ մարզախաղի վարժությունների կատարում:	<ul style="list-style-type: none">• Անհատական և ստեղծարար արտահայտում Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:• Արդարություն և զարգացում Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):• Համակարգեր և մոդելներ Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես նաև «վոլեյբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից,

	<p>վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <ul style="list-style-type: none"> • Անհատներ և հարաբերություններ Սովորողներն ուսումնասիրում են մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
--	--

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա- թվագիտություն, հաշվողական կարողություններ:

Ֆիզիկա - պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Կենսաբանություն- մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 6

Հանդբոլ – 8 ժամ. մարզախաղի տեխնիկական և խմբային տակտիկական գործողությունները, հանդբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը, գնդակի ընդունում և փոխանցում, գնդակի վարում և նետում դարպասին, ազատ հարձակողական տակտիկա և

խաղի տիրապետում	
Նպատակը	
<ul style="list-style-type: none"> • Ուսուցանել հանդբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, վարման, կանգառների, փոխանցումների, գնդակի հանման, հափշտակման, ուղիղ ձեռքով նետման տեխնիկան: • Ծանոթացնել ազատ հարձակողական տակտիկական գործողություններին: • Ուսուցանել հանդբոլ խաղալ պարզեցված կանոններով և տակտիկական 2*1, 3*2, 3*3 առաջադրանքներով: • Զարգացնել շարժողական ունակություններ՝ արագաշարժություն, դիմացկունություն, կոորդինացիա, ճարպկություն, ցատկունակություն: • Դաստիարակել համագործակցություն, փոխօգնություն, հանդուրժողականություն, ինքնատիրապետման, նպատակասլացության հմտություններ: 	
Վերջնարդյունքները	
<ul style="list-style-type: none"> • Տիրապետի հանդբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, գնդակի ընդունման, վարման, կանգառների, փոխանցումների, գնդակի հանման, հափշտակման, ուղիղ ձեռքով նետման տեխնիկային: • Ծանոթ լինի ազատ հարձակողական տակտիկական գործողություններին: • Ունենա շարժողական ունակություններ՝ արագաշարժության, դիմացկունության, կոորդինացիայի, ճարպկության, ցատկունակության բավարար մակարդակ: • Դրսևորի համագործակցություն, փոխօգնություն, հանդուրժողականություն, ինքնատիրապետում, նպատակասլացություն: 	
Բովանդակություն	
<p>Հանդբոլիստի կեցվածքը և տեղաշարժերը: Հանդբոլիստի կեցվածքով տեղաշարժեր՝ կից քայլերով, մեջքով առաջ կողմ, դեմքով առաջ կողմ: Կանգառներ երկու քայլով և ցատկով, դարձումներ գնդակով: Տեխնիկայի տարրերի համակցումներ՝ տեղաշարժեր, հանդբոլիստի կեցվածքով կանգառ, դարձումներ – արագացում:</p> <p>Գնդակի ընդունում և փոխանցում: Գնդակի ընդունում և փոխանցում զույգերով, եռյակներով, քառակուսու մեջ, շրջանում: Մեկ ձողքով ուսի վրայից:</p> <p>Գնդակի վարում: Գնդակի վարում ցածր, միջին և բարձր կեցվածքով, շարժման ուղղությունը փոփոխելով: Գնդակի հանում և հափշտակում խաղընկերոջից:</p> <p>Գնդակի նետում դարպասին: Գնդակի նետում ուղիղ ձեռքով վերևից, ծալված ձեռքով վերևից և կողքից: Գնդակի նետում դարպասի նշադրված ուղղությամբ: Շրջափակում՝ համագործակցելով խաղընկերների հետ:</p> <p>Ազատ հարձակողական տակտիկա: Դիրքային հարձակում՝ առանց փոխելու խաղացողների դիրքը: Արագ հարձակում կենտրոնով: Արագ հարձակում երկու խաղացողների փոխգործողությամբ:</p> <p>Խաղի տիրապետում: Հեշտացված խաղ հանդբոլի պարզեցված կանոններով: Խաղային առաջադրանքներ՝ 2*1, 3*2, 3*3 դիմաց:</p>	
Առաջարկվող գործունեության ձևեր	Ընդհանրական խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> • Առանց գույքի և դրանց կիրառմամբ հանդբոլ մարզախաղի 	<ul style="list-style-type: none"> • Անհատական և ստեղծարար արտահայտում

վարժությունների կատարում:

Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում:

- Արդարություն և զարգացում

Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-համայնք-հասարակություն հարաբերությունները, ռեսուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):

- Համակարգեր և մոդելներ

Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Հանդբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:

- Անհատներ և հարաբերություններ

	<p>Սովորողներն ուսումնասիրում են մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:</p>
--	---

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:

Ֆիզիկա – պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 7

Ֆուտբոլ – 8 ժամ. մարզախաղի տեխնիկական և խմբային տակտիկական գործողությունները, տեղաշարժերի տեխնիկական, գնդակի տիրապետման տեխնիկական, դարպասապահի գործողությունները և տեղաշարժվելը, խաղի տակտիկական, հարձակողական տակտիկական և խաղի տիրապետումը

Նպատակը

- Ծանոթացնել ֆուտբոլ մարզաձևով զբաղվելու տարիքային ժամանակաշրջանին և սկզբնական ընտրությանը:
- Տեղեկություններ հաղորդել դեռահասների վրա ֆուտբոլի բարերար ազդեցության, տնային առաջադրանքների և առաջադիմության հաշվառման վերաբերյալ:
- Ուսուցանել ֆուտբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, անշարժ և գլորվող գնդակների հարվածների, կասեցումների, գնդակի վարման տեխնիկան:

- Ոսուցանել դարպասապահի տեղաշարժերի, գնդակի որսման տեխնիկան:
- Երկկողմ խաղ 2*2, 3*3, 4*4, 5*5, 6*6, 7*7 դեմ:
- Զարգացնել շարժողական ունակություններ՝ արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ցատկունակություն:
- Դաստիարակել փոխօգնության, կարգապահության, համարձակության, համագործակցության հմտություններ:

Վերջնարդյունքները

- Ծանոթ լինի ֆուտբոլ մարզաձևով զբաղվելու տարիքային ժամանակաշրջանին և սկզբնական ընտրությանը:
- Կարևորի դեռահասների վրա ֆուտբոլի բարերար ազդեցությունը:
- Տիրապետի ֆուտբոլիստի կեցվածքի, տեղաշարժերի, անշարժ և գլորվող գնդակների հարվածների, կասեցումների, գնդակի վարման տեխնիկային:
- Ծանոթ լինի դարպասապահի տեղաշարժերի, գնդակի որսման տեխնիկային:
- Ունենա շարժողական ունակություններ՝ արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ցատկունակության բավարար մակարդակ:
- Ցուցաբերի փոխօգնության, կարգապահության, համարձակության, համագործակցության հմտություններ:

Բովանդակություն

Ֆուտբոլի բարերար ազդեցությունը ֆիզիկական զարգացման գործընթացում: Ֆուտբոլով զբաղվելու սկզբնական տարիքային ժամանակաշրջանը: Տեղեկություններ խաղի կանոնների, անկյունային և 11 մետրանոց հարվածների, տնային հանձնարարությունների և առաջադիմության գնահատման վերաբերյալ:

Տեղաշարժերի տեխնիկա: Ֆուտբոլիստի կեցվածքով տեղաշարժվելը կից քայլերով, խաչաձև քայլերով, մեջքով առաջ, կանգառներ, դարձումներ, արագացումներ, դարձումով ոտնափոխումով, պոկումներ: Տեղաշարժեր՝ գնդակը հսկողության տակ պահելով:

Գնդակների տիրապետման տեխնիկա: Հարված գնդակին ոտքով: Հարվածներ անշարժ և գլորվող գնդակին ոտնաթմբով և ոտնաթմբի ներսի և դրսի մասերով: Հարվածներ գլորվող գնդակին առաջարկվող եղանակներով՝ ըստ ճշտության: Հարված թռչող և օդից իջնող գնդակին ոտնաթաթի ներսի մասով: Հարվածներ դիպուկության և հեռավորության վրա: Հարված գնդակին գլխով: Հարված գնդակին ճակատով՝ առանց ցատկի և ցատկով, հարվածներ նշանակետին:

Գնդակի կասեցում: Գնդակի կասեցում ոտնաթաթի ներսի և դրսի մասերով, ազդրով, որովայնով, կրծքով (տղաներ) տեղում և շարժման մեջ:

Գնդակի վարում: Գնդակի վարում ոտնաթաթի ներսի և դրսի մասով, յուրացված տեխնիկական հնարքների կիրառմամբ, արագությամբ:

Խաբկեր՝ խաբկ անցումով, հարվածով անցում՝ հնարքի կիրառմամբ:

Գնդակի խլում՝ արտանքով մրցակցի դիմացից, աջից և ձախից:

Գնդակի նետում: Գնդակի նետում տարբեր ելման դրություններից, թափավազքով, դիպուկության և հեռավորության վրա:

Աճաբարարություն գնդակով: Աճաբարարություն աջ և ձախ ոտքերով, ոտնաթաթով, ազդրով, գլխով:

Դարպասապահի խաղի տեխնիկա: Գնդակի նետում մեկ ձեռքով, գնդակի որսում, գնդակի հետմղում, տեղափոխություն, ուղղության շեղում: Գլորվող գնդակի որսումը ցածրից, կրծքից ցած թռչող գնդակի որսում: Դուրս գալ ընդառաջ գնդակին և մրցակցին:

Խաղի տակտիկա: Հարձակողական տակտիկա: Անհատական տակտիկա: Տեղաշարժեր ողջ մարզահրապարակում գնդակ ստանալու նպատակով, դուրս գալ ազատ գոտի «բացում», «փակել» մրցակցի գործողությունները, քանակական առավելության ստեղծում մրցակցի կիսադաշտում: Յուրացված տակտիկական հնարքների կիրառում: Դիրքային հարձակում՝ առանց փոխելու խաղացողների դասավորությունը:

Խմբակային տակտիկա՝ խաղընկերների համագործակցություն գրոհելիս, փոխանցումներ՝ կարճ, միջին տարածության, լայնակի, երկայնակի և անկյունագծային եղանակներով, ցածրից և օդով:

Պաշտպանական տակտիկա: Անհատական գործողություններ. դիրքի և գործողությունների ճիշտ ընտրություն մրցակցին փակելու և գնդակը խլելու համար:

Խմբակային գործողություններ: Դիրքի և գործողությունների ճիշտ ընտրություն, մրցակցի հարձակման հակազդում, խաղընկերների համագործակցության ապահովում, փոխապահովում:

Խաղի տիրապետում: Երկկողմ խաղ ֆուտբոլի պարզեցված կանոններով, յուրացված տեխնիկական և տակտիկական հնարքների կիրառմամբ: Խաղ 2*2, 3*3, 4*4, 5*5, 6*6, 7*7 դեմ:

Առաջարկվող գործունեության ձևեր	Ընդհանրական խաչվող հասկացություններ
<ul style="list-style-type: none"> Առանց գույքի և դրանց կիրառմամբ ֆուտբոլ մարզախաղի վարժությունների կատարում: 	<ul style="list-style-type: none"> Անհատական և ստեղծարար արտահայտում Մարզախաղերի միջոցով սովորողներն ուսումնասիրում են այն ուղիները, որոնցով բացահայտում են իրենց ֆիզիկական հնարավորությունները և արտահայտում են գաղափարներ, համոզմունքներ, արժեքներ, զգացումներ, բնության երևույթներ, մշակույթի դրսևորումներ: Արժևորվում են գեղագիտությունը և ստեղծարարությունը ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտներում: Արդարություն և զարգացում Սովորողներն ուսումնասիրում են մարզվող մարդու (մարզիկի) իրավունքները և պարտականությունները, մարզական կազմակերպությունների և անհատ-

	<p>համայնք-հասարակություն հարաբերությունները, ոետուրսների տեղաբաշխումը, հավասար հնարավորությունները, հակամարտության և խաղաղության բանաձևերը (մարզաձևերի կանոններն ու մրցման օրենքները):</p> <ul style="list-style-type: none"> • Համակարգեր և մոդելներ Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Ֆուտբոլ» մարզաձևը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից, մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ: • Անհատներ և հարաբերություններ Սովորողներն ուսումնասիրում են մարզախաղերում դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
--	--

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու - բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:
Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ, մոդելավորում:

<p>Ֆիզիկա – պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին: Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն: Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:</p>
Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ
<p>Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53</p>

Թեմա 8
Ընտրովի ուսումնական նյութ – 5 ժամ. լողի ուսուցում, դահուկային պատրաստություն
Նպատակը
<ul style="list-style-type: none"> • Տեղեկություն տալ դահուկասպորտի ձևերի մասին: • Ձևավորել միաժամանակյա մեկքայլ և անքայլ ընթացքի հմտություններ: • Ուսուցանել «սահող» քայլով և «եղևնաձև» եղանակով վերելքի տեխնիկան: • Ուսուցանել արգելակման, հենումով դարձման և տեղում թափով դարձման տեխնիկան: • Ձևավորել թմբերի և փոսերի հաղթահարման հմտություններ: • Ձևավորել կարճ, միջին և երկար տարածություններ հավասարաչափ արագությամբ հաղթահարելու կարողություններ: • Տեղեկություն տալ լողի առողջարարական և բուժիչ նշանակության մասին: • Կատարելագործել կրող կրծքի և մեջքի վար լողաձևի տեխնիկան: • Կատարելագործել կրծքի և մեջքի վրա լողաձևի մեկնարկների և դարձումների տեխնիկան: • Ամրապնդել բրաս լողաձևով ոտքերի, ձեռքերի աշխատանքի համադրությունը շնչառության հետ: • Ուսուցանել մեկնարկային ցատկի տեխնիկան: • Կատարելագործել տարբեր լողաձևերով դարձումների տեխնիկան: • Ուսուցանել լողալ հավասարաչափ արագությամբ: • Զարգացնել արագաշարժություն, դիմացկունություն, կոորդինացիա, ճկունություն: • Դաստիարակել նախաձեռնություն, կամք, համարձակություն:
Վերջնարդյունքները
<ul style="list-style-type: none"> • Կարողանա վնասվածքների և ցրտահարությունների ժամանակ ցույց տալ առաջին օգնություն: • Կարողանա կատարել չմշկային ընթացք և հենումով դարձում: • Կարողանա կրկնվող դահուկաընթացքով անցնել 500 մ:

- Կարողանա կրոլ և բրաս լողաճերով լողալ հավասարաչափ և փոփոխական արագությամբ:
- Դրսևորի կամային որակներ, համարձակություն և փոխօգնություն:
- Կարողանա լողալ 100 մ ցանկացած լողաճով:
- Տիրապետի խեղդվողին տեղափոխելու տեխնիկային:
- Ցուցաբերի արագաշարժություն, դիմացկունություն, կոորդինացիա, ճկունություն:
- Դրսևորի նախաձեռնություն, կամք, համարձակություն:

Բովանդակություն

Դահուկային պատրաստության տեխնիկայի մեթոդները և միջոցները:

Ծանոթություն դահուկասպորտի ձևերին (դահուկավազք, հատուկ ոլորավայրէջք, սրընթաց վայրէջք, ցատկեր դահուկներով աշտարակից): Միաժամանակյա մեկքայլ և անքայլ ընթացքներ: Վերելք «եղևնաձև» և «սահող» քայլերով: Արգելակում և հենումով դարձում: Տեղում թափով դարձումներ: Վայրէջք բարձր կանգնվածքով: Կրկնողական դահուկաընթացք. 3-4 անգամ 100-ական մետր վազքահատվածների անցում արագությամբ: Հավասարաչափ արագությամբ տեղաշարժ դահուկներով 2,5 կմ (տղաներ), 2 կմ (աղջիկներ):

Լողի ուսուցման տեխնիկայի մեթոդները և միջոցները: Տեղեկություն լողի առողջարարական, բուժիչ նշանակության մասին: Կրծքի և մեջքի վրա կրոլ լողաճի տեխնիկայի կատարելագործում: Կրծքի և մեջքի վրա կրոլ լողաճերի մեկնարկների և դարձումների կատարելագործում: Բրաս լողաճով ոտքերի, ձեռքերի և շնչառության համագործակցություն: Դարձումներ տարբեր լողաճերով: 25 մ տարածության կրկնվող լող յուրացված եղանակով և տարրերով (3-4 անգամ 25-ական մ): Հավասարաչափ արագությամբ լող 50 մ:

Առաջարկվող գործունեության ձևեր

- Առանց գույքի և դրանց կիրառմամբ դահուկային պատրաստության և լողի վարժությունների կատարում:

Ընդհանրական խաչվող հասկացություններ

- Օրինաչափություններ
Դրանք հանդիպում են ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող պատահարներում և հարաբերություններում, օրինակ՝ սահող քայլքերում, դահուկավազքում կամ լողում թիավարման և դարձումների ժամանակ, շարժումների հերթագայության մեջ: Համապատասխան մոդելներն առաջին քայլն են՝ պատասխանելու այն հարցին, թե ինչպես են առաջանում դրանք:
- Համակարգեր և մոդելներ
Ֆիզիկական կուլտուրա հասկացությունը (ինչպես և «Դահուկային սպորտ» և «Լող» մարզաձևերը) շատ ընդգրկուն և բարդ է միանգամից և ամբողջովին ուսումնասիրելու համար: Ուստի այն ուսումնասիրում են մաս առ մաս: Ուսումնասիրության միավորը

	<p>համակարգն է: Համակարգը միմյանց հետ կապված հասկացությունների մեկ ամբողջություն է: Համակարգը կարող է կազմված լինել, օրինակ, շարժումներից, վարժություններից, խաղերից և մարզաձևերից: Համակարգն ունի սահմաններ, բաղադրիչներ և հետադարձ կապ:</p> <ul style="list-style-type: none"> • Անհատներ և հարաբերություններ Սովորողներն ուսումնասիրում են մարզական գործունեության մեջ դրսևորվող համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերություններն ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում, ինչպես նաև մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Մարդու նկարագիրը և արժանապատվությունը, բարոյական դատողությունը և բարեվարքության գիտակցումը:
--	---

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու- բանավոր խոսք կառուցելու ունակություն, մասնագիտական բառապաշարի հարստացում:

Մաթեմատիկա - թվագիտություն, հաշվողական կարողություններ:

Կենսաբանություն - մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա՝ մկանային, նյարդային և օրգան համակարգերի իմացություն:

Ֆիզիկա – պատկերացում կենսամեխանիկայի օրենքների մասին, գիտելիքներ շարժումների դինամիկայի, ստատիկայի և կինեմատիկայի հիմունքների մասին:

Ռուսերեն և այլ օտար լեզուներ – կարդալ, գրել, հասկանալ և թարգմանել հայերեն:

Կապը հանրակրթության չափորոշի վերջնարդյունքների հետ

Հ1, Հ2, Հ3, Հ13, Հ14, Հ15, Հ26, Հ27, Հ28, Հ29, Հ30, Հ31, Հ32, Հ33, Հ34, Հ35, Հ36, Հ37, Հ38, Հ41, Հ42, Հ46, Հ47, Հ48, Հ49, Հ50, Հ51, Հ52, Հ53

Թեմա 9

Ընտրովի ուսումնական նյութ – 5 ժամ. ուժային պատրաստություն, սեղանի թենիս

Նպատակը

- Սովորեցնել մկանային ուժի մշակման մեթոդները և միջոցները:
- Զարգացնել ուժ և արագաուժային ունակությունները:

- Տեղեկացնել սեղանի թենիսի պարապմունքների ներգործության մասին:
- Ուսուցանել սեղանի թենիսի տեխնիկայի հնարքները:

Վերջնարդյունքները

- Նկարագրի մկանային ուժի մշակման մեթոդները և միջոցները:
- Դրսևորի ուժային և արագաուժային ունակություններ:
- Գիտենա սեղանի թենիսի կրթական, առողջարարական և դաստիարակչական նշանակությունը:
- Կարողանա կատարել սեղանի թենիսի տեխնիկական հնարքները:
- Դրսևորի նախաձեռնություն, ինքնուրույնություն, ինքնատիրապետում, սեփական շարժողական գործողությունների գնահատման կարողություն:
- Կարողանա համագործակցել, դրսևորի բարության, ազնվության, հանդուրժողականության, բոլորի նկատմամբ հարգանքի հատկանիշներ:
- Դրսևորի արագաշարժության, դիմացկունության, դիպուկության, ճարպկության, ուժային, ցատկունակության հմտություններ:

Բովանդակություն

